

An impressionistic painting of autumn leaves in shades of green, yellow, orange, and red, with dark, expressive brushstrokes. The painting is set against a solid orange background.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՁԱՅՆԸ

Գրական, գեղանկարչական,
լուսանկարչական և կիրառական
արվեստի սեղծագործություններ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՉԱՅՆԸ

*Գրական, գեղանկարչական,
լուսանկարչական և կիրառական արվեստի
ստեղծագործություններ*

Նվիրվում է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 821.19:75:77
ԳՄԴ 84(5Հ=51)+85.1
Ա 596

Հրատարակվել է
«Անդին» ամսագրի և «Total Art» մշակութային
ՀԿ-ի երաշխավորությամբ:

Կազմողներ՝
Սամվել Մուրադյան
Անի Տեր-Գուլանյան
Աննա Հարությունյան
Կարինե Դավթյան

Ա 596 Անկախության սերնդի ձայնը: Գրական, գեղանկարչական, լուսանկարչական և կիրառական արվեստի ստեղծագործություններ / Կազմողներ՝ Սամվել Մուրադյան, Անի Տեր-Գուլանյան, Աննա Հարությունյան, Կարինե Դավթյան: ԵՊՀ մշակույթի կենտրոն.- Եր.: ԵՊՀ հրատ., 2021.- 78 էջ:

Ժողովածուում գետեղված են ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների և կատարողների հանրապետական ուսանողական բիենալեի գրական և կերպարվեստի մրցույթներում պարգևատրված մասնակիցների ստեղծագործությունները (2019 թ. հունիսի 14):

ՀՏԴ 821.19:75:77
ԳՄԴ 84(5Հ=51)+85.1

ISBN 978-5-8084-2476-0

© ԵՊՀ հրատ., 2021
© Հեղ. խումբ, 2021



Հայ ժողովրդի պատմության ընթացքում միշտ էլ կարևորվել են կրթությունը, գիտությունը և մշակույթը: Տաթևի, Գլաձորի, Սանահինի, Ամարասի և այլ կրթօջախների ունեցած կրթական հարուստ փորձի շնորհիվ մեզ համար շատ կարևոր ու դժվար ժամանակահատվածում՝ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին, ստեղծվեց Հայաստանի համալսարանը, այժմ՝ Երևանի պետական համալսարան, որն արդեն 100 տարեկան է: ԵՊՀ-ն գիտակրթական կառույց լինելուց բացի՝ նաև մշակութային օջախ է, և համալսարանի ղեկավարությունը միշտ կարևորել է ուսանողների ներգրավվածությունը բուհի մշակութային կյանքին: Սա էր պատճառը, որ 2006 թ. ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ ստեղծվեց ԵՊՀ մշակույթի կենտրոնը, որն արդեն 15 տարեկան է: Այդ տարիների ընթացքում կենտրոնը բավականին լուրջ կրթական աշխատանք է իրականացրել՝ նպաստելով ուսանողության շրջանում մշակութային և գեղագիտական ճաշակի ձևավորմանն ու ամրապնդմանը, ստեղծել ինքնաբացահայտման հարթակ, մշակույթի միջոցով սեփական հնարավորությունները բացելու, արվեստով կրթվելու, ստեղծագործական գործունեություն ծավալելու համար:

ԵՊՀ հիմնադրման 100-ամյակի տոնակատարությունների ընթացքում կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ, միջազգային գիտա-ժողովներ, գրքերի շնորհանդեսներ, ցուցահանդեսներ, ներկայացումներ: «Անկախության սերնդի ձայնը» խորագիրը կրող երիտասարդ ստեղծագործողների և կատարողների հանրապետական ուսանողական քիենալեն իր ձևաչափով առաջինն էր, որ անկացվեց Հայաստանում և նվիրվեց ԵՊՀ 100-ամյակին: Այն մրցույթ-փառատոն էր, որն իր մեջ ներառում էր կատարողական և ստեղծագործական արվեստի գրեթե բոլոր ոլորտները: Բիենալիի գաղափարը ծնվեց դեռևս 2016 թ. ՀՀ անկախության 25-ամյակին ԵՊՀ-ում անցկացված «Անկախության սերնդի ձայնը» ստեղծագործական ներհամալսարանական մրցույթ-փառատոնի ընթացքում, որը ներառում էր նաև հանդիպումներ, վարպետաց դասեր և այցելություններ: Այս ձևաչափը պահպանվեց նաև քիենալիի ընթացքում, որին մասնակցեցին հանրապետության շուրջ 10 բուհերից տաղանդավոր

ուսանողներ: Ձևավորվեց պրոֆեսիոնալ ժյուրի հետևյալ ուղղությունների համար՝ ստեղծագործական՝ գրական, կոմպոզիտորական, գեղանկարչության, լուսանկարչության և կիրառական արվեստի, կատարողական՝ ասմունքի, պարի, երգեցողություն և գործիքային կատարումներ: Բիենալեն լայն արձագանք գտավ բուհերի ուսանողների կողմից: Հրատարակված այս ժողովածուն ևս մեկ ապացույցն է բիենալեի կայացման: Կարծում եմ, որ «Անկախության սերնդի ձայնը» խորագիրը կրող բիենալեն հանրապետության երիտասարդության շրջանում կարևոր մշակութային իրադարձություն էր: Շնորհավորում եմ այս ժողովածուում տպագրված բոլոր ուսանողներին և բարի երթ եմ մաղթում նրանց հետագա ստեղծագործական գործունեությանը:

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

***ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար,
ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս***

Ժամանակի հարահոսը, բարեբախտաբար, անընդհատ առաջ է մղում կյանքը, և նորանում է աշխարհը: Մերնդավոխությունը հնի ու նորի բնական պայքարում հաղթանակը միշտ վերապահում է նոր սերնդին: Այլապես մարդկությունն առաջընթաց ու զարգացում չէր ապրի:



Բնական այս գործընթացում, անշուշտ, հիմը չի պարտվում. որքան էլ դիմադրում է նա, այնուամենայնիվ, հենց ինքն է նոր սերնդին մոր ու դայակի նման աճեցնում իր ծոցում, ուղղորդում, ճանապարհ է տալիս իրեն փոխարինողին, որն իր թարմ մտածողությամբ ու առաջադիմությամբ և հենց հնի աջակցությամբ, նրանից դասեր առնելով, նրա ձեռքբերումների յուրացումով է ինքնահաստատվում, գրավում իր տեղը իրականության բոլոր ոլորտներում՝ թե՛ գիտության մեջ և թե՛ արվեստում նվաճում նորանոր բարձունքներ:

Գիտության բնագավառի օրինաչափությունները, թվում է, ավելի բնական են. ընդունակ ու նպատակասլաց երիտասարդն իր մասնագիտության մեջ համառ աշխատանքով կարող է հասնել նոր բարձունքների:

Արվեստի բնագավառը նույնպես համառ աշխատասիրությամբ է զարգանում, բայց այստեղ գործում են ուրիշ օրինաչափություններ և հատկապես՝ սուրբգրյան հանրահայտը՝ «Բազում են կոչվածները, բայց սակավ են ընտրյալները»: Այս երևույթը ժամանակին Ռաֆայել Պատկանյանն է դիպուկ բնորոշել.

*Թե վասարակես՝ հարուստ կըլնիս, թե լավ սորվիս՝ գիրնական,
Աշխատանքով կլինիս բրժիշկ, կըստանաս վարձ, աստիճան,
Եթե բախարը հաջողե քեզ՝ թագ էլ գլխիդ կունենաս,
Բայց բանաստեղծ դու չես լինի, թե սուրբ կոչումն չունենաս:*

Ամեն սերունդ, տարբեր մասնագիտություններ նախընտրած պատանիներ ու երիտասարդներ այդ «սուրբ կոչումն» ունենում են այս կամ այն չափով, և ամեն ստեղծագործողի թվում է, թե ինքն ընտրյալ է, բայց կյանքն է ճշտում նրա օժտվածության չափն ու ուղղությունը: Այդպես է նաև անկախության սերնդի պարագայում, որի ուսանող լինելու վառվռում ժամանակը զուգադիպեց հայոց մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակի տոնակատարությանը:

Հոբելյանական միջոցառումները՝ ԵՊՀ ռեկտորատի և մշակույթի

կենտրոնի կազմակերպած ֆակուլտետային ու համահամալսարանական գիտական նստաշրջաններն ու ստուգատեսները, հանրապետական փառատոները, կենսագործվող մյուս ծրագրերը անկախության սերնդի համար լավագույն հնարավորություն էին՝ գիտական հետաքրքրությունների հետ միասին դրսևորելու նաև իրենց գեղարվեստական շնորհները:

Գրեթե մի ողջ տարի կազմակերպվում էին տոնական միջոցառումներ, որոնց մասնակցում էր խանդավառ ուսանողությունը՝ արտահայտելով իր բուռն վերաբերմունքը, օրինական հպարտությունն ու սերը մայր բուհի և առհասարակ հայրենի կրթության ու գիտության նկատմամբ: Դասերից, գրադարանից ու գրքերից բացի՝ նոր սերունդն ունի և այլ հետաքրքրություններ: Պատեհության դեպքում շատերի մեջ արթնանում է ստեղծագործական ձիրքը, որ կաշկանդված նիրհում էր մասնագիտական գիտելիքների ծանրությունից ու ժամանակի սղությունից: Չմոռանա՞նք, որ սիրո և հերոսանալու հասակն է դա, որ երիտասարդներին մղում է մեծագործությունների և արվեստի լեզվով ինքնարտահայտվելու: Քաղաքային միջավայրում, երկարատև ընթերցանության կամ «գիտության գրանիտը կրծելու» ոգորումներում ուսանողների, մանավանդ գյուղաշխարհից եկածների մեջ, արթնանում է ծննդավայրի, հայրենի բնության ու հեռավոր հարազատների կարոտը: Եվ ոչ միայն դա:

Մեր օրերի անցուդարձը, արցախյան պատերազմը, հաղթության բերկրանքն ու պարտության դառնությունը, հերոսների սխրանքն ու զոհվածների կսկիծը, քանձրացող անորոշությունն ու հայրենիքի ճակատագիրը անտարբեր չեն թողնում մեր օրերի զգայուն երիտասարդությանը: Դա էլ հարկադրում է ելք տալ մարդկային բնական խոհերին ու զգացմունքներին, և տարբեր մարդիկ նախընտրում են ինքնարտահայտման տարբեր եղանակներ ու միջոցներ, արվեստի տարբեր տեսակներ: Եվ նրանց ստեղծագործություններում լինում են հաջողված երկեր՝ բանաստեղծություններ, պատմվածքներ էսսեներ, կատարողական արվեստի հետաքրքիր դրսևորումներ, կերպարվեստի գործեր ու լուսանկարներ:

Սույն ժողովածուում հրատարակվում են ԵՊՀ 100-ամյակի տոնակատարության փառատոն-մրցույթներում հաղթած ու պարգևատրված ուսանողների տարածաժամր ստեղծագործությունները, որոնց մեջ ընթերցողն իսկապես կլսի անկախության սերնդի ձայնը, շոշափելիորեն կտեսնի մեր օրերին ու ժամանակներին, շուրջը ծավալվող իրադարձություններին նետված երիտասարդական թարմ հայացք, կզգա ու կճանաչի նոր սերնդի հետաքրքրությունների, ազգային հասարակական բնույթ ունեցող անձնական խոհերի ու զգացմունքների գեղեցիկ աշխարհը:

ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐՎԻՅԱՆ

***Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ.
Հր. Թամրազյանի անվան հայ գրականության
պարմության ամբիոնի վարիչ***



Սիրելի՛ համալսարանականներ,

Ես ողջունում եմ ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված առաջին հանրապետական ուսանողական բիենալեի բոլոր մասնակիցներին և կազակերպիչներին: Հանրապետական ուսանողական այս բիենալեն շատ բացառիկ մի ծրագիր է, որի կարևորագույն նպատակը տաղանդավոր ուսանողների բացահայտումն ու հանրայնացումն է: Այն իսկապես ստեղծում է մի հարթակ, որտեղ արվեստի տարբեր ուղղություններում կարող են մասնակցել և լավագույնս բացահայտել իրենց ունակությունները արվեստասեր այնպիսի երիտասարդներ, որոնք գուցե փաղը կշարունակեն իրենց գործունեությունը մշակույթի որևէ ոլորտում՝ դառնալով նկարիչներ, կոմպոզիտորներ, գրողներ և կիարստացնեն հայ մշակույթի գանձարանը: Ինչու չէ՞ գուցե կիրականացնեն իրենց երազանքները, որոնք երկար տարիներ թաքուն են պահել այլ մասնագիտության մեջ հմտանալու ճանապարհին:

Բարձր եմ գնահատում այն հանգամանքը, որ բիենալեի արդյունքում տպագրվում է այս ժողովածուն: Սա գեղեցիկ ավանդույթ է, որ մնայուն արժեք է և՛ մայր բուհի, և՛ Հայաստանի համար:

Հատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել Կարինե Դավթյանին, որը տարիների ընթացքում կարողանում է բացահայտել տաղանդներ և կրթել սերունդներ, կենտրոնի ողջ աշխատակազմին արված հրաշալի աշխատանքի համար և հույս եմ հայտնում, որ այս ձևաչափով բիենալեն ապագայում կունենա իր ուրույն տեղը միջազգային ասպարեզում ևս: Բարի երթ եմ մաղթում բոլոր մասնակիցներին և բազում հաջողություններ իրենց ստեղծագործական կյանքում:

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ վաստակավոր նկարչուհի,

**«Total-Art» մշակութային հասարակական
կազմակերպության նախագահ**

**ԳՐԱԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԱՆԱՀԻՏ ՂԱԶԱՆԵՅՅԱՆ

Անահիտ Ղազախեցյանը ծնվել է 1999 թ. դեկտեմբերի 26-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Սովորել է Վանաձորի Ա. Ս. Պուշկինի անվան թիվ 4 դպրոցում, այնուհետև՝ Վ. Տերյանի անվան թիվ 5 ավագ դպրոցում: 2017 թ. ընդունվել է Հայ-ռուսական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետ: Տիրապետում է հայերենի, ռուսերենի, անգլերենի, սովորում է գերմաներեն և պարսկերեն: 2018-2019 թթ. աշխատել է «Արևիկ» հրատարակչությունում որպես մարկետոլոգ: 2019 թվականից աշխատում է «Դարակ» հրատարակչությունում իբրև թարգմանիչ: Բազմաթիվ կազմակերպությունների անդամ է, օրինակ՝ Եվրոպական երիտասարդական խորհրդարան, Հայերեն Վիքիպեդիա և այլն: 15 տարեկանից թոթակցել է 17.am կայքին: Նույն տարիքից սկսել է տպագրվել բազմաթիվ գրական կայքերում և հանդեսներում, որոնցից են «Երկունք» գրական թերթը, «Գարուն» ամսագիրը, «Շավիղ+» երիտասարդական էջը, «Գրանիշ» գրական կայքը, «Ինքնագիր»-ը, «Գրեթերթ» պարբերականը և այլն: 2016 թ. Լոռու մարզում ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված մրցույթում զբաղեցրել է 1-ին հորիզոնականը՝ «Կներե՞մ, Հայաստան» էսսեով: Նույն թվականի գարնանը ճանաչվել է 17.am կայքի Տարվա լավագույն լրագրող: 2017 թ. դարձել է «Գրանիշ» գրական համայնքի Տարվա բացահայտում: Նույն թվականին դարձել է «Արարատ Սկրտումյանի անվան գրական մրցանակի» դափնեկիր, տպագրվել «Բառերի եզրին» անթաղոգիայում: 2018 թ. «Դար» ակումբի կողմից կազմակերպված «Թավշյա հաղթանակ: Ինձ բացակա չլինեք» համահայկական մրցույթում «Ներանձնական հեղափոխություն» էսսեով զբաղեցրել է 1-ին հորիզոնականը՝ տպագրվելով նույն վերնագիրը կրող անթոլոգիայում: Վերոնշյալ էսսեն հաղթող է ճանաչվել նաև «Գրանիշ» գրական համայնքի 2018 թ. «Լավագույն էսսե» անվանակարգում: 2018 թվականին ՀՀ մշակույթի նախարարության



աջակցությամբ տպագրվել է նրա առաջին գիրքը՝ «Դիլեմա» բանաստեղծությունների ժողովածուն: 2019 թ. Գրանիշի «Լավագույն թարգմանություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել Դենիել Ջոնսի «Խիզախները երբեք բանաստեղծություն չեն գրում» շարքի համար, Անահիտի թարգմանությամբ լույս են տեսել Մարկ Տվենի «Թոմ Սոյեթը արտասահմանում» և Լ.Ֆ. Բաումի «Սանտա Կլաուսի կյանքն ու արկածները» գրքերը, իսկ 2020 թ.՝ Քեյթ Աքքինսընի «Թանգարանի ետնաբեմում» վեպը: Նրա բանաստեղծությունները տպագրվել են ուկրաիներեն «Լիտավրի» ավանախում:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի չայնը» երիտասարդ սրեղծագործողների և կապարողների հանրապետական ուսանողական քիեմալեի գրական մրցույթում զբաղեցրել է 1-ին հորիզոնականը և արժանացել «Անդին» ամսագրի մրցանակին:

ան-անձնական

Մամուլի ազատությունը սահմանափակված է 37 երկրում: 54 երկրում բացակայում է քաղաքական ու ընդհանրապես քաղաքացիական ազատությունը: Իսրայելի անկախությունը չեն ճանաչում 24 մուսուլմանական պետություններ: Քո անկախությունը՝ ծնողներդ՝ մի ամբողջ կյանք, մի քանի ընկեր՝ ըստ նախասիրության, սահմանադրորեն՝ մինչև 18-դ լրանալը, իսկ հոգու խորքում՝ դու ինքդ, բայց մեկ-մեկ, երբ ուժ չկա, երբ պետք է հանգստանալ ու կախվել մեկնումեկից: Կամ՝ մեկնումեկից կախվելով հանգստանալ: Կամ՝ կախվել ու մեկնումեկից հանգստանալ: Ընթացքում կորոշես:

Բայց ի՞նչ էիր մտածում. հա, տեսնես աշխարհում կա՞ վիճակագրություն, թե միջինը որքան շաքարավազ են ավելացնում թեյում, քանի մարդ է ամռանը նարինջներ ուտում ու քանի հոգի է ապրելու որոշում կայացնում ամեն անգամ Միլարոյի կամրջով անցնելիս: Բայց դա մի կողմ, հաշվե՞լ ես՝ քանի վայրկյան անճշտությամբ անցար փողոցն ու մարմինդ որ անկյան տակ հայտնվեց գետնին՝ թույլ, անկարող, հաշտված: Չես հիշո՞ւմ: Փոխարենը պատուհանից կարողանում ես ամեն օր հաշվել՝ քանի մանուշակագույն մեքենա է անցնում, եթե մանուշակագույն մեքենաներ, իհարկե, անցնում են ու գրել բլոկնոտում: Այսօր մեկն էր, երեկ՝ չորսը, անցած օրը չի անցել կամ չես տեսել, էդպես էլ է

լինում: Ամեն կերպ էլ լինում է, չէ՞: Իսկ տեսնես մանուշակագույն մեքենաները ամեն օր են վրաերթի ենթարկում, քեռչ:

Ու հիշում ես՝ վարորդի ոչինչ չհասկացող դեմքը ու բառերը մարդկանց աղմուկի պես. «անցնելու ժամանակը չէր, ոչ էլ տեղը»:

Դու սկսել ես խոսել ուր ամսականում: Հետո հասկացել ես, որ միշտ ժամանակից շուտ ես խոսում ու փորձել ես լռել: Երկար չի տևում: Շտապում ես: Շտապողը տղա չի ունենում, հանկարծ հիշում ես: Ինչ անիմաստ բան: Գուցե դու ուզում ես հենց աղջիկ ունենալ: Հետո մտածում ես, որ դրա մեջ էլ խտրականություն կա: Բայց, միևնույնն է, ինչո՞ւ հիշեցիր, ի՞նչ կարևոր էր: Ի՞նչ երեխաների ժամանակն է՝ դու հիվանդանոցում, մենակ-մենակ, ոչ ոք չի համարձակվում ինչ-որ բան հարցնել, անգամ մայրդ: Բուժքույրը մի երկու անգամ մտնում է սենյակը՝ ստուգելու (ի՞նչ իմանաս՝ փողոցն էդպես անցնողը դռան փոխարեն պատուհանով չի ցանկանա դուրս գալ), մի երեք անգամ հարցնում՝ ինչ-որ բանի կարի՞ք ունես ու դուրս գալիս: Բայց իսկապես, ինչ-որ բանի կարիք ունե՞ս:

Ու դու մեկ անգամ կանգնեցնում ես նրան ու, իսկապես կարիք ունենալով պատասխանի, հարցնում՝ իսկ 1+1 հավասա՞ր է 2-ի ու նա նայում է քեզ երկար, ու թվում է՝ ձեռքը հիմա հեռվից կմոտեցնի, կդնի ճակատիդ, կհամոզվի, որ ջերմությունդ բարձր-բարձր է, մի քանի անրարկում կանի, հույսով, որ քնես, արթնանաս, կհիշես, որ $1+1=2$: Եվ նա անհույս-անտարբեր գլխով է անում: Եվ դու ուզում ես նրան բացատրել, որ այո, իսկապես, $1+1=2$ ՝ մաթեմատիկոսներն, բայց, դուք չգիտեք, ճիշտը $1+1=1$ -ն է՝ մարդկայնորեն, սիրո լեզվով ասած: Չգիտեք, որ թվերի փոխարեն մարդիկ են լինում մեկ-մեկ, որոնք 0.5 չեն լինում, ու եթե 1 են, ուրեմն գումարը երբեք 2 չպետք է լինի: Մեկ են՝ մեկ կմնան, եթե ճիշտ են գումարվում, եթե սխալ չեն հայտնվել այդ խնդրում: Իսկ գուցե դու պարզապես սխալ էիր հայտնվել: Դրա համար չգիտես՝ եթե Միրաբոյով քայլերի՞ր՝ ինչ որոշում կկայացնեիր: Միրաբո չկար, բայց այլ տարբերակներ կային, որոնց ձեռքդ չգնաց: Փոխարենը տեսար՝ ինչ եղավ: Ու քանի որ, այնուամենայնիվ, արթնացել ես, այնուամենայնիվ, ինչ-որ մեկը հաստատել ու կնիքել է՝ պետք է ապրես, սկզբի համար որոշել ես, որ պետք է դուրս գրվել ու թողնել-գնալ: Փարիզ: Հավանաբար ուղեղի ցնցումը բավականին զգալի է, երբ ուզում ես գնալ մի տեղ, որը ամենավերջին տարբերակը կլինե՞ր՝ ընտրություններից: Բայց հարկավոր է գնալ, հաշվել, քեռճարաններում քանի մարդ է միայնակ նստած, օրական քանի հոգու են ամուսնության առաջարկ

անում էշֆելի մոտ (հոգոց, դու դա երբեք չէիր ուզեմա, չնայած ո՞վ գիտի), սեփական փորձով համոզվել՝ քանի՞ ժամ կարելի է նստել Սենի ափին՝ ակիքներին նայելով:

-Ուր:

Երազ: Չէ, երազ չես տեսնում, գոնե հիվանդանոցում էդպես է, մի տեսակ չտրամադրող գիշերներ՝ անընդհատ (իսկ ըստ վիճակագրության՝ մարդիկ ե՞րբ են դադարում հիշել երազները): Հա, պարզապես հիշեցիր, որ անունը, որի պատճառով էս հիմար պատմության մեջ ես ընկել, բոլորին էլ հետո՞ գցել, երազ կամ երազանք էր նշանակում: Հետո հիշեցիր «Ռեքվիեմ երազանքի համար» ֆիլմը: Հետո հասկացար, որ սխալ տեղ է տանում, որ բոլոր արարողությունները ժամանակավորապես հետաձգվել են ու ամեն բան մնում է երազ՝ առանց հոգեհանգստի: Կամ մղձավանջ:

Փարիզում դու հաստատ մի քանի շաբաթում անգիր կիմանաս՝ ով որտեղ է թաղված Պեր-Լաշեզում, ու, չնայած մորդ գոուշացումներին, երեկոյան մի քանի անգամ կերևաս արվարձանային ինչ-որ տեղերում, ու մեկ-մեկ իմպրեսիոնիզմի կամ պոստ-մոդեռնիզմի շրջանի կտավներով պոստքարտեր կուղարկես՝ այս ու այն կողմ: Ու մտքերը երևի առաջին անգամ չեն լինի այսուայն կողմ:

Ըստ վիճակագրության՝ տեսնես քանի՞ մարդ է մնում, երբ նրանց ասում են՝ թող գնա, քանի մարդ չի թողնում մինչև վերջ խոսել ու համբուրում է դիմացինին, միայն թե չարունակի մույն բանը ասել, իսկ քանի՞ս են լռում՝ մինչև անցնի գնալու ժամանակը, կուլ տալիս գնալը՝ բառերի հետ: Ըստ վիճակագրության՝ քանի՞ս են հիվանդանոցներում հայտնվում ամենակարևոր բաժանումներից հետո՝ զուտ պատահաբար, կամ քանիսն են նարիջներ առնում ու բարձրանում տուն՝ կարծես կյանքը շարունակվում է: Եվ գուցե իսկապե՞ս կյանքը շարունակվում է:

Բրելի «Մի լքիր դու ինձ» երգը 36,408,034 դիտում ունի: 36,408,034 մարդ չի՞ լքել՝ ըստ տրամաբանության: Կամ դարձե՞լ է ստվերը ստվերի, ստվերը ձեռքի կամ ստվերը շան: Բերե՞լ է մարգարիտներ այն երկրից, որտեղ անձրև չի լինում: Ինչ-որ բան առհասարակ փոխվե՞լ է: Որովհետև դու ոչինչ չարեցիր բացի էս հիմար սենյակում հայնտվելուց: Չնայած փորձում ես կապը չտեսնել: Բայց ամեն բան կատարվեց հրաժեշտից հետո. ժամանակում, երբ միևնույնն էր լուսացույցի գույնը, երբ աշխարհը շաղված-շաղված էր:

-Ինը:

Հետո չես հիշում էլ ոչինչ: Միայն մտածում ես՝ որ երբ մարդկանց աջ այտին հարվածում են, ձախը էդպես էլ չեն պարզում: Իսկ դու ճակատդ էլ պարզեցիր: Դրա համար հերիք է: Մեքենայի վարորդին ազատ են արձակել, նա քեզ ծաղիկներ ու շոկոլատ է բերել, կյանքը ոնց որ թե իր հունի մեջ է ընկնում, բայց մամուլի ազատությունը դեռ սահմանափակված է 37 երկրում: 54 երկրում բացակայում է քաղաքական ու ընդհանրապես քաղաքացիական ազատությունը: Իսրայելի անկախությունը չեն ճանաչում 24 մուսուլմանական պետություններ ու աստված գիտի՝ կճանաչեն, թե չէ: Իսկ դու վթարից հետո մի քիչ անկախ ես գգում, մտածում ես՝ դուրս կգրվես, վեր կկենաս ու կգնաս: Իսկ ըստ վիճակագրության՝ քանի՞ս են վեր կենում ու գնում:

Ի սկզբանե
Քո արտեւանունքներն էին
Ու սերը՝
Նրանցից
Սկսվող
Այլ ելք չթողեց,
բառերին՝
Քան Լինել:

Այս քամիներից,
Մոխրագույն տանիքներից,
(Որտեղ չենք էլ եղել),
Ու
Ճանապարհներից,
(Որոնցով վերադարձի փորձ ենք անում),
Այս դռներից,
Տներից ու բակերից անձանոթ,
(Որոնք քեզ հանդիպելու
Չստացված ու հուսահատ
Խաբկանքներ են),
Ծխախոտների ծայրերից,

Ծայրերի մարդկանցից,
Այն բոլոր հյուսիսափայլերից,
(Որոնք էդպես էլ չտեսանք),
Ու երազներից,
(Որոնցում ապրելը գերադասելի է
Առավել),
Այս բոլոր տների
Պատուհաններից,
(Ուր ճաղեր են անհամար
Ու մարդիկ՝ սովորական անցուղարձով),
Ու երկինքներից,
(Որոնցում աստղերը
Հեշ էլ անհաշվելի չեն),
Ու աստղերից,
(Որտեղից էլ ոչ ոք չի իջնում
Երկիր,
Որովհետեւ բոլորս հոգնել ենք փորձելուց),
Եւ այս բոլոր փորձերից,
(Որոնք քեզ
Մոտեցնում ու հեռացնում են առավել),
Եւ այս բոլոր երգերից,
(Որ ականջներումդ են,
Քո մեջ,
Մարմնիդ մեջ),

Այս բոլոր բառերից ու
Բանաստեղծություններից
Անդին
Կա՞ մի բան
Որ կկարողանա լինել
Քո մասին:

Ես պրծում չունեմ, սիրելիս, օրերից՝ հուսահատ, նույնակերպ
Քաղաքից այս փոշոտ, հասարակ
Մարդկանցից՝ քեզանից շատ տարբեր:

Ես պրծում չունեմ մտքերից՝
Հեռացնող ու վանող ինձ քեզնից,
Սպասումից, կարոտից հոգետանջ
Թղթերից՝ անբառ, անթանաք:

Ես պրծում չունեմ քո մասին,
Քո ձևից, քո ձայնից ինձ պատմող
Երգերից, սիրելիս, մեր այն հին,
Վերքերից քեզ համար նվաճող:

Ես պրծում չունեմ ինձանից,
Սովերից իմ անգույն ու անձեռ
Քաղաքի այս հին պուրակում՝
Քեզանից շատ հեռու ու անսեր:

Սովորականից շատ եմ մտածում
Քո մասին
Կարմրի մասին
Միտքս ոնց որ Ամստերդամի
Կորած փողոցները լինի՝
Մի երկու հոգի են
Ամեն մեկն իր երաժշտությանը
Իր գործերով
Ու ես
Հենց էդտեղ,
Էդ երկուսից խոսքի անլսելիության չափ հեռու
Քեզ սեր կխոստովանեի,
Սեր իմ,
Եթե բառերը էսքան պարզ չլինեին
Զգացմունքի առաջ
Ես քեզ համար Բրեյլ կմիացնեի

Կարմիր լապտերների տակ,
Ես պրեներ կկարդայի քեզ համար
Իմ սեր
Որովհետեւ, նրանից հետո
Դու լավագույնն ես,
Որ պատահել է հետոս
Որովհետեւ եթե նա բանաստեղծություններ էր գրում
Դու բանաստեղծություն ես, որ կաս՝
Երկնային,
Բարձր,
Կարմիր
Կարմիր
Կարմիր
Իմ բոլոր մոխրագույն օրերում:

Քեզանից այս կողմ
Հասկացա
Չեմֆիրային՝
Ծայրից ծայր
Սրճահամն
Ու հոտը՝
Մեկ առ մեկ,
Կապտաթույրն
Ու ճերմակը՝
Երանգ առ երանգ,
Մերն՝
Ինչքան կարող էի,
Փախուստը՝
Քայլ առ քայլ,
Կապվածությունը՝
Մաշկիս վրա,
Կործանումն՝
Ամբողջությամբ:
Քեզանից այս կողմ
Սիրեցի
Քաղաքը՝ հերձած՝

Մաս առ մաս,
Երգերը՝
Վայրկյան առ վայրկյան,
Սրճարանները՝
Հասցե առ հասցե,
Նամակներդ՝
Տառ առ տառ,
Քեզ՝
Ոտքից գլուխ,
Ներսից ու դրսից,
Անձայրածավալ:
Քեզանից այս կողմ
Գիտեմ՝
Ինչ-որ մեկը
Եղիցի լույսը
Ինչ-որ տեղ ինձ համար
Շշմջաց՝
Բառ առ բառ:



ԱՆՈՒՇ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

Անուշ Աքրահամյանը ծնվել է 2000 թ. հուլիսի 26-ին Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղում: 2018 թ. գերազանցությամբ ավարտելով տեղի թիվ

1 միջն. դպրոցը՝ ընդունվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ: 2016 -2019 թթ. եղել է Հայաստանի պատանի թղթակիցների ցանցի՝ 17.am-ի թղթակից: Գրավիչ գյուղական պատմությունների համար արժանացել է խրախուսական մրցանակների: 2018 թվականից առ այսօր «Գրքամոլ» ակումբի անդամ է: Համալսարան ընդունվելու առաջին իսկ տարուց Մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան է և մասնակցում է մի շարք միջոցառումների, որոնցից իր համար առավել նշանակալի էր մասնակցությունը Տ. Չուխաջյանի «Կարինե» օպերետում: 2019 թ. համագործակցել է «Թոնդրակ» արշավական ակումբի հետ, որի ֆիլմ-ստուդիայում խոսնակ է առ այսօր: Զբաղվում է նաև լեռնագնացությամբ և Հայաստանում տասից ավելի լեռներ է բարձրացել:

2019 թ. ԵՊՀ հիմնադրամն 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի չայնը» երիտասարդ սրեղծագործողների և կարարողների հանրապետական ուսանողական փեննալեի գրական մրցույթում զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:

Հորս

Ես նոր եմ զգում
Քո կոշտ ձեռքերի,
Ճաքճաք վերքի
Նուրբ քնքշությունը:
Քո դրած քարի
Ու ծեփած ցեխի
Մեծ ամրությունը:
Քո խղճին իջած,
Ապակուց շիկնած,
Բայց չծերացած
Ազնվությունը:
Ու քարից քամած,
Բայց կուլ գնացող
Քո հացն ու ջուրը:
Ես նոր եմ զգում
Քո «ախ»-ից ուժեղ
Քո բռունցքի մեջ
Բարեխիղճ մարդու
Տոկունությունը:
Քո «վայ»-ից ուժեղ
Մարերը շրջող,
Աստղերին հասնող
Բացատրությունը,
Բայց և քո ստի
Միշտ նույն մնացող
Ծեր համրությունը:
Նոր եմ հասկանում
Դարդերով անցած,
Վշտերից քրծված
Հայ տղամարդու
Համբերությունը:
Աշխարհի դեմ բաց,
Աշխարհին շիտակ
Մասիս լեռան պես
Քո ծանրությունը:

Անձրև էր երկել քաղաքի վրա,
Ու մայթերը դեռ չէին չորացել,
Թվում էր, թե մեկը անխնա
Իր ամբողջ վիշտը կաթիլ էր դարձրել...

Ու լուսաբացին անգույն ու մռայլ
Իմ թաց աչքերը փակեցի նորից,
Որ չթրջվեն մայթերը ահա
Կաթիլներ դարձած իմ ողջ վշտերից...

Ածուխ-գիշերվա կամարների տակ
Մերը մոռացած կոշիկներիդ մեջ
Բնագլորվ պիտի օտար աղջկա նեկտարը քամես,
Հրապուրանքիդ շղթայով կապես,
Ու վերջում ասես.
-Հայացքդ մնաց երակներիս մեջ,
Բայց ինձ կներես.
Հայացքով երբեք սերը չեմ չափել:

Ածուխ-գիշերվա կամարների տակ
Մերը մոռացած երազի ծալքում
Մի ուրիշ աղջիկ երկինք-աչքերով
Ինչո՞ւ էր ասում.
Թե հայացքներից սերեր են ծաղկում...

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Առ-Մի)



Արմինե Հարությունյանը ծնվել է Վայոց ձորի մարզի Ռինդ գյուղում: 2006-2018 թթ. հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը, եղել է աշակերտական խորհրդի անդամ: 2012-2014 թթ. պարել է գյուղի ժողովրդական պարային համույթում, 2015-2018 թթ. եղել է «Ռինդ» պարային համույթի սան, որտեղ և պարել է ազգագրական և ազգերի ժողովուրդների պարեր՝ ուսումնասիրելով պարի պատմություն: Մասնակցել է պարային տարբեր մրցույթների և փառատոնների: 2014 թ. մասնակցել է «Մենք ենք մեր երկրի վաղվա տերերը» ռազմահայրենասիրական ճամբարին: 2015 թ. մասնակցել է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի միջոցառողական օլիմպիադային՝ զբաղեցնելով 1-ին հորիզոնականը, 2016 թ. մայիսին՝ հանրապետական փուլին՝ 2-րդ հորիզոնականը: Գրական առաջին քայլերն արել է 2016 թվականին: 2017 թ. խաղացել է «Քայլեր դեպի անմահություն» պիեսում՝ զինվորի մոր կերպարում, 2018 թ.՝ «Ա՛խ կանա՛յք, կանա՛յք» կատակերգությունում՝ խանդոտ կնոջ կերպարում: 2018 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժին: 2018 թվականից անդամակցում է ԵՊՀ ուսանողական խորհրդին, 2019 թ. նշանակվել է ՌԻՄ-ի սոցիալական հանձնաժողովի ֆակուլտետային պատասխանատուի, 2020 թ.՝ մշակույթի հանձնաժողովի ֆակուլտետային պատասխանատուի պաշտոնին: 2018 թվականից ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» քատրոն-ստուդիայի սան է: 2019 թ., որպես կամավոր, ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ 100-ամյակի միջոցառումներին: 2019 թվականին խաղացել է ռեժիսոր Կարինե Դավթյանի կողմից բեմադրված Տ. Չուխաջյանի «Կարինե» օպերետում՝ ոստիկանի կերպարում: «Yellow youth center» երիտասարդական ակումբի համահիմնադիրը (2020 թ.) ու քարտուղարն է:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երկրասարդ սրեղծագործողների և կապարողների հանրապետական ուսանողական քիննալեի գրական մրցութում գրադեցրել է 3-րդ, իսկ ասմունքի մրցութում՝ 1-ին հորիզոնականները:

* * *

Մի հպումով կապվածությունս կախվածության փոխեցիր ու թմրանյութի պես ճանկդ գցեցիր: Վերցրիր սիրտս, դիր գրպանդ և արգելեցիր մեռնել: Տուն հասնելուն պես փոխեցիր տաբատդ՝ չստուգելով գրպանը:

Ձեռքս գրպանս եմ խոթում, բացի հիշողություններից այլ բան չեմ գտնում: Ամուր սեղմում եմ ափիս մեջ ու շարունակում ճանապարհս, որ տանում է այնտեղ, ուր դու այլևս չկաս...

Դու չասացիր տանդ հասցեն,
Որ չիմանամ, թե երբ վառվեց
Ու երբ հանգավ
Երկրորդ հարկի պատուհանին
Քեզ պատկերող դեղին լույսը:

Դու չասացիր հոգուդ հասցեն,
Որ միշտ փնտրեմ աչքերիդ մեջ
Ու չգտնեմ.
Անգեն մնամ...
Ու քո հանդեպ սերս խեղդեմ:

Դու չասացիր սրտիդ հասցեն,
Որ քեզ հասնող ճանապարհներ էլ չփնտրեմ:
Քեզ չունենամ...
Քեզ չհասնեմ...
Ու կարոտից անվերջ մաշվեմ...

Ես ջարդում եմ գրիչներս,
Որ դադարեմ գրել քո մասին:
Ջարդում եմ մատիտներս,
Որ չնկարեմ աչքերդ:
Չեմ փակում աչքերս,
Որ չհիշեմ ժպիտդ:
Բայց ուժեղ չեմ շնչում,
Որ չկորցնեմ բույրդ:
Մտածում եմ քո մասին,
Որ չզգամ պակասությունդ:
Եվ շարունակում եմ սիրել...
Սիրել...որ ապրեմ...

Շոգին քրտնել եմ մատներդ,
ցրտին՝ սառել,
բայց դու բաց չես թողել ձեռքս և արագ գրպանդ չես խոթել:
Դիմացել ես անցնող մարդկանց հայացքներին և
ձեռքս էլի բաց չես թողել:
Եղել ես համբերատար, երբ
սկսել եմ խենթորեն երգել փողոցներում բա՜րձր-բա՜րձր:
Նեղացել ես,
երբ քննադատել եմ ինքս ինձ,
երբ խոսել եմ թերություններիս մասին:
Չէիր նեղանում,
երբ սրճարաններում սպիտակ անձեռոցիկներով փոքրիկ
ինքնաթիռներ էի պատրաստում և անանուն մամսկներ
թողնում անձանոթներին...
Էիր կամ չէիր:
Հիմա ձեռքերս հաճախ եմ սառում:
Դիտավորյալ չեմ դնում գրպանս,
որովհետև սովոր չեմ այդ ճանապարհով քայլելիս ձեռքս գրպանս
խոթել:
Մարդիկ այլևս չեն նկատում ինձ,
երբ անցնում եմ իրենց կողքով:
Փողոցի անձանոթ մարդիկ և ծանոթ ծառերն ու շենքերն

այլևս չեն լսում երգս,
 որ խենթորեն լավում էր
 այդքան բա՛րձր ու բա՛րձր:
 Թերություններիս մասին խոսել այլևս չեմ կարող,
 եթե ստացվի միայն գրել,
 եթե...
 Եվ սրճարանի սպիտակ անձեռոցիկներն
 արդեն դարձել են հասցեագրված:
 Ամեն անգամ թողնում եմ հերթական ճերմակ ինքնաթիռը
 հույս ունենալով,
 որ այն քեզ կհասնի:
 Ինչքա՛ն ինքնաթիռներ եղան,
 որ աղբամանում թաքնվելով
 քեզ չհասան,
 և դեռ ինչքա՞ն ճերմակ անձեռոցիկներ կլինեն,
 որ ինքնաթիռ դառնալով կմնան սեղաններին և
 կամ աղբամանների անկյուններում...

Երագում եմ ես
 Լինել միշտ քեզ հետ:
 Գրկել քեզ, թոչել,
 Թռչել առհավետ:

Տիեզերքում անծայր
 Քեզ հետ երագել:
 Գրկել քեզ, սիրել,
 Շոյել, համբուրել:

Չգալ հուզմունքից դողացող
 Սրտիդ զարկերն ահագնացող,
 Եվ աչքերիդ մեջ նայելիս
 Այրվել շուրթերիդ կրակից...
 Գիտակցել, որ կաս,
 Բայց լինել հեռու...
 Երագել միշտ քեզ,
 Ապրել առանց քեզ...

«Խորհուրդը Մեծի»

Անունդ տալիս
Մարմինս դողում է,
Այտերս այրվում,
Աչքերս լցվում...
Ոտքերս ծալվում են,
Քամուց ճոճվող ու դողացող,
Իր ծիլերին չենթարկվող ծաղկի նման...
Դա մոտալուտ բաժանումի,
Քո մոտալուտ հեռացումի,
Քեզ կորցնելու ահ, սարսափի
Չգացումն է խենթ ու խելառ...
Անունդ դաջվել է սրտիս,
Իսկ ձայնդ՝ ականջներիս մեջ,
Ժպիտո՜ւ աչքերիս,
Չեռքերդ՝ ափերիս,
Շուրթերդ՝ շուրթերիս,
Էությունդ՝ էությանս մեջ...
Մազ չմնաց գլխիս վրա,
Որ չփոխվի սևից սպիտակ:
Չկա Քեզ պես ուրիշ մեկը,
Քեզ պես բարի, նուրբ ու շիտակ...
Թե Չարենցը տեսներ ինձ,
Թե իմանար Քո մասին,
Խորհուրդ կտար ասել Քեզ
Փոքրիկ մի տող՝ ճիշտ ու տեղին...



ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սուսաննա Դանիելյանը ծնվել է 1997 թ. փետրվարի 19-ին ք. Դիլիջանում: 2014 թ. ավարտելով Դիլիջանի ավագ դպրոցը՝ ընդունվել է Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական

բանասիրության ֆակուլտետ՝ «Թարգմանչական գործ՝ անգլերեն-հայերեն» մասնագիտությամբ և ավարտել գերազանց, որից հետո, շարունակելով նույն ֆակուլտետում՝ արտասահմանյան գրականություն մասնագիտությամբ, ստացել է մագիստրոսի կոչում: 2018-2019 թ. ուսումնական տարվա առաջին կիսամյակում փոխանակման ծրագրով ուսանել է Իտալիայի մայր բուհում՝ Բոլոնիայի համալսարանում, իսկ 2019 թ. սեպտեմբերից ընդունվել և սկսել է ուսանել նաև Հայաստանի երգի պետական թատրոնում: Ուսանողական առաջին իսկ տարիներից դաստիարակվել է ակտիվություն՝ անդամակցելով ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությանը, որի շրջանակներում մասնակցել և կազմակերպել է սեմինար-քննարկումներ՝ լինելով ընդհանուր հարցերի և տեղեկատվական հանձնաժողովների անդամ: 2016 թ. դեկտեմբերին կատարել է բանավոր համաժամանակյա թարգմանություն «Իրան-Հայաստան-Վրաստան. խաղաղ հարևանության և զարգացման տեսլականներ» միջազգային կոնֆերանսին, իսկ 2017 թ.՝ ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 70-ամյակին նվիրված 4-րդ միջազգային տարեկան գիտական նստաշրջանին, որտեղ ներկայացրած գեկույցը հրատարակվել է ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուում: 2018 թ. մարտին եղել է ադմինիստրատիվ հարցերով կամավոր թարգմանիչ «Eurimages» ծրագրին: 2019 թ. հուլիսին կատարել է անգլերեն-հայերեն-անգլերեն բանավոր թարգմանություն իտալիայից ժամանած Sahaka մարքեթինգային ընկերության պատվիրարության համար, իսկ հունիսից օգոստոս ընկած ժամանակահատվածում աշխատել է SFL ընկերությունում որպես կոնտենտ ստեղծող (content creator): Այժմ աշխատում է Շիրակացու ճեմարանում որպես

անգլերենի ուսուցիչ: Զբաղվում է երաժշտությամբ՝ ստեղծելով և թվայնացնելով հեղինակային երգերը՝ սկսած տեքստային մակարդակից, ներառյալ թվային գործիքավորումն ու ձայնագրումը, բաշխումը միջազգային օնլայն հարթակներում: 2017 թ. հոկտեմբերին Իտալիայի Սավինիո քաղաքում որպես անկախ երաժիշտ մասնակցել է ոչ ֆորմալ կրթությանն ու միջմշակութային հաղորդակցությանը նվիրված «Eurovisions» երիտասարդական միջազգային փոխանակման կարճաժամկետ ծրագրին:

2019 թ. ԵՊՀ հիմնադրամն 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կալարողների հանրապետական ուսանողական բիենալիի գրական մրցույթում զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը:

* * *

Հայացք եմ տալիս, աչքերդ ձեռքով
Փակում ես իսկույն, որ ինձ չտեսնես.

Տգե՞ղ եմ:

Լուռ հեռանում եմ, մինչ կբացեիր
Աչքերդ կրկին...

Երբ մոտ եմ գալիս, դու շրջված ստվերով
Փախչում ես ինձնից, որ չլինեմ ես.

Վախենալի՞ եմ:

Չեմ հետևում՝ քեզ անձայն թողնելով
Ինքդ քո կամքին...

Երբ ձայնում եմ քեզ, զգույշ չլսելով
Անպատասխանն ես տալիս ինձ անտես,
Չանձրալի՞ եմ:

Ու լռում եմ ես, լռեցված լուռը
Թողնում եմ անքիժ...

Ու խորշում ես դու շունչդ պահելով
Մատով դիպչել ինձ, որ չխախտվեմ ես:

Փռչի՞ եմ:

Անիմաստին ու քամուն փարվելով՝
Դառնում եմ փռչի:

Չես գրկում դու ինձ՝ հոգում տանելով
Հոգիս նվիրյալ, որ չտարվեմ ես:
Ծա՞նր եմ:
Սավառնում եմ լուռ թևերով եթեր՝
Փարվելով Երկնին:

Երբ հայտնվում եմ՝ կյանքի հայտնելով,
Չես ուզում ինձ քո լիաշող կյանքում:
Ավելո՞րդ եմ:
Չեմ փորձում գտնել ինձ տեղ քո կյանքում,
Դառնում եմ Լուսին:

* * *

Լինեի՜ միտքը ես անջնջելի...
Բայց էջն էի, որ ձեռքովդ գրկվեց,
Հայացքովդ լուռ, դյուրված ընթերցվեց:
Լինեի՜ միտքը ես անփախչելի...
Բայց իմ կյանք-միտքը քո հոգով գրկվեց,
Իմ իսկ կամքով այն հոգուդ նվիրվեց:
Լինեի՜ միտքը ես անայրելի...
Բայց դարձա թերթ, որ ձեռքովդ այրվեց,
Ձմռան կամ քամու ցրտից քեզ փրկեց:
Լինեի՜ միտքը ես անջնջելի...

* * *

Տիեզերքում լքյալ, կիսամեռ սենյակ,
Ծուռ դռան ոռնոց՝ քամուց չարչարվող,
Փռչե մատնահետք, փայտյա շրջանակ,
Փռչեծածկ բարձեր, գույն արևագող,
Անխիղճ սլաքի անդադրում զարկեր,
Բաժակաբայություն, փետուր արմաթև,
Դռնից դուրս ծանոթ, մոտեցող քայլեր,
Հեռացան մորից. գնում եմ արդեն:

ԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



Անի Միքայելյանը ծնվել է 1996 թ. մայիսի 26-ին, Արագածոտնի մարզի Օշական գյուղում, մանկավարժների ընտանիքում: 2003 թ. հաճախել է Արմավիրի մարզի Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոցը: Մինչև 2013 թ. սովորել է այնտեղ, այնուհետև տեղափոխվել է Էջմիածին քաղաքի Էօրենկեան հանրակրթական դպրոցի 12-րդ դասարան: 2014 թ. ավարտել է դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության բաժին, ավարտել է նաև նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ արտասահմանյան գրականություն մասնագիտությամբ, այժմ նույն ամբիոնի ասպիրանտ է: 2014 թվականից առ այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան է: 2016 թ. մասնակցել է «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդական մրցույթ-փառատոնին և գրական մրցույթում արժանացել է «Անդին» ամսագրի «Հատուկ մրցանակին»: 2017 թ., որպես կամավոր, մասնակցել է «Սփյուռք ամառային դպրոց» ծրագրի ազգային երգի և պարի դասընթացներին: Սեպտեմբերի 18-24-ը Վրաստանում մասնակցել է «Համախմբել երիտասարդներին արվեստի միջոցով» (Connecting Youth Through Art) խորագիրը կրող ծրագրին: 2018 թ. տեղի է ունեցել ԵՊՀ մշակույթի կենտրոնի կողմից ներկայացված «Հայկական էսքիզներ» (Վարդգես Պետրոսյանի համանուն վիպակ-էսսե մոտիվներով) ներկայացման պրեմիերան, որի սցենարի համահեղինակներն են ԵՊՀ մշակույթի կենտրոնի տնօրեն, ռեժիսոր Կարինե Դավթյանի հետ և Անի Միքայելյանը: 2019 թ. մասնակցել է համահայկական 7-րդ խաղերին որպես կամավոր: 2020 թ. գերազանցությամբ ավարտել է մագիստրոսական կրթությունը: 2019 թվականից մինչ օրս աշխատում է Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում որպես դաստիարակչական աշխատանք-

ների կազմակերպիչ:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կադարողների հանրապետական ուսանողական քիենալեի գրական մրցույթում նրա «Մեկդարյա իմ վեհություն» էսսեն գրադեցրել է 1-ին տեղը:

Մեկդարյա իմ վեհություն (էսսե)

Ես գալիս եմ քեզ մոտ: Փափակ աչքերով եմ գալիս, ներողամիտ ժպիտով, գալիս եմ, որ ուսերդ մի բուռ դառնան, որ քո քարե պարգույթյունն այլևս հասարակ չլինի, գալիս եմ, որ մի քանի տարով մեկդարյա հարատևում պարզեն, որ այս անհայտ սերը գաղտնարանից հանեն, գալիս եմ, որ բոլոր վեպերը, պատմվածքներն ու նովելները քեզնից պոկեն ու քո՛նր դարձնեն:

Այս տան առաջին քարը հարյուր տարի առաջ է դրվել: Արդեն հարյուր տարի, դեռ հարյուր... Ես երևի հաշիվ չունեցողների շարքում եմ: Մտածում եմ՝ ի՞նչ գեղեցիկ ես դու, մայրական է գեղեցկությունդ. դու թարմացնում ես հիմը, հնօրյան, նորացնում ես նորը, նորօրյան, քո մեջ բացում ես մարդուն, նրա մտքերը՝ խոսքի վերածում: Ես այնպե՛ս եմ ուզում իմ ու քո ճանապարհը քարտեզագրել, որպեսզի միասին վերապրենք:

Ես ճանապարհին եմ, կներես, մի քիչ ուշանում եմ: Պատճառն այն չէ, որ ճանապարհը երկար է. ես մահկանացու եմ՝ մահկանացուները ժամանակից շուտ այլևս չեն գալիս, հոգնել են անմահներին սպասելուց, բայց ես գալի՛ս եմ:

Ես մոռացա արդարացնել իմ ներողամիտ ժպիտը: Երբ արդեն որոշել էի գալ քեզ մոտ, հիշեցի նրանց, որոնց դու քո մեկդարյա եզերքի մեջ կորցրիր: Չկորան նրանք, այլ գնացին, որ մենք՝ ես ու դու ամրանանք:

Ես հասնում եմ, քիչ է մնացել, մի քիչ...

Իսկ հիմա ուզում եմ, որ դու սպասես ինձ. ես ուզում եմ, որ միասին տեսնենք կատարվելիքը:

Տան երդիկները ծխում են, բայց օդանավակայանում հերթական ու անվերադարձ թռիչքին են պատրաստվում: Ասում են՝ լույսը բա-

րի է. անվերադարձ թռիչքները ձգվեին մինչև առավոտ: Բնակիչները հոգնում են քարից հաց քամելուց ու հեռանում: Հեռանում են ու դառնում անհայրենիք, բայց քո երդիկները շարունակում են ծխալ: Իսկ այն տանից, որի երդիկի ծուխը բախվում է սահմանին, նորածնի ճիչ է լսվում, ու չի հանգում թոնիրը: Այդ տանը շատ փամփուշտներ են զարկվել, բայց վիրավոր չէ տունը. բնակիչներ ունի: Այդ տան պապի ասածներից շատ բան չես հասկանա (գուցե կարիք էլ չկա):

– Կվերադառնա՞ն արդյոք:

Կվերադառնան: Միգուցե: Հաստատ: Զգիտեմ... բայց կվերադառնան:

Այդ տան պապը դեռ տներ է կառուցում: Թուռը շաղախն է պատրաստում, պապը՝ քարը դնում: Օղանավակայանում օրն առավոտ է դառնում վերադարձողների համար, բայց ես այդ թռիչքում չկամ. ես այստեղ եմ:

արձակ ոճի բանաստեղծություններ, ինչպես նաև՝ 2 վիպակ:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կադարողների հանրապետական ուսանողական քիենալիի գրական մրցույթում նրա «Կյանք 5 թուպում» էսսեն գրադեցրել է 2-րդ տեղը:

ԿՅԱՆՔ 5 ԲՈՊԵՆՈՒՄ

Պատմությունը այս սկսվում և ավարտվում է այնտեղ, որտեղ կյանքի մասին իմ պատկերացումները ձգտում են անսահմանության: Կարծիքները, որ կարող են բախվել այս պատմության իրողությունների և երևակայությունների գործողության տարածքում, կարող են շատ թվալ, բայց թվացյալ տեսությունը իրողություն չէ այնքան ժամանակ, քանի դեռ այն ինչ-որ մեկը փորձով չի ապացուցել և անգամ այն ժամանակ, երբ փորձով կապացուցվի ինչ-որ թվացյալ իրողություն, միևնույնն է, մի օր կհայտնվի մեկ ուրիշ մարդ, մեկ այլ անհատականություն, որ մեկ այլ փորձով կժխտի արդեն իսկ ապացուցվածը և կստեղծի նույնպիսի մի նոր աշխարհ՝ բոլորովին նոր մարդկային տեսակներով:

Ահա այսպիսին է կյանքը, երբ նրան կողքից ես նայում: Անգամ երբ տեսականորեն դու ի գորու չես անթաք հայացք գցել մի մատերիալիստական էակի վրա, որի հոգին քեզ անչափ հարազատ է թվում. մեկ է դու փորձում ես անել դա: Բո այդ քայլը բացատրվում է այն բանով, որ երբ կատարյալ իր նմանությամբ ստեղծեց մեզ, նա մեր մեջ դրեց ցանկություններ, զգացմունքներ , մեր մտքին տվեց արագություն, որ ոչ մի տարածություն չի ճանաչում և կարող է հասնել անսահման հեռուն միլիվայրկյանից էլ արագ ժամանակում, որը մենք դեռ չենք կարողանում չափել: Մտացածին և երևակայական աշխարհներ կան միլիարդներով: Դա պայմավորված է յուրաքանչյուր անհատով և նրա երևակայության անսահմանությունով: Ամենքս մեզ համար հորինում ենք մերը, մեզ հարազատը՝ թեկուզ և ինքներս հասկանում ենք, որ դրանով զբաղվում ենք տաղտկալի ինքնախաբեությամբ, միևնույնն է, կյանքի ծրագրային բազայում, որը ստիպում է մեզ ապրել և իմաստի կռիվ մղել՝ փնտրելով ուղիներ, որպեսզի լցնենք ժամանակ առ ժամանակ ի հայտ եկող ժամանակային դատարկությունը և իմաստագուրկ

մենությունը. դա է պահանջվում զբաղվել ինքնախաբեությամբ:

Եվ անգամ այն մարդը, ում կյանքը շատ կարճ տևեց՝ ընդամենը հինգ րոպե, նա մույնպես հասցրեց ծերանալ և մահանալ խոր ծերության մեջ: Այդ երևույթը չբացահայտված մնաց բոլորի համար, այդ մասին կարդացողներից և ոչ մեկը չէր կարողանում այն տեղավորել իր երևակայության սահմանային անսահմանության մեջ:

Չտեսնված և չլսված այս դեպքի մասին կարդացի Շվեյցարական մի ամսագրում, երբ գնացել էի ըներոջս այցելության: Ամսագիրը մեծ ճանաչում ուներ և հարգանք էր վայելում ու գրել ինչ որ բան, որը իրենից կներկայացներ ամենից հասարակ կեղծիք, չէր կարող: Համենայն դեպս, ընթերցողները, իրոք, վստահում էին այդ ամսագրի հոդվածներին ճշմարտացիությամբ:

Սիրելի՛ ընթերցող, ներողություն եմ խնդրում, որ նախօրոք չներկայացա: Անունս Վալտեր է, ծնվել եմ հին աշխարհի քաղաքներից մեկում՝ Վենետիկում: Երբ առաջին անգամ ծնվեցի, մտածում էի, թե աշխարհը հրաշք է և պետք է սիրել և ապրել՝ չմտածելով ոչնչի մասին: Բայց արի ու տես, որ աշխարհը նման չէ հրաշքի, ավելի շուտ այն լավ ծրագրավորված խաղ է թվում և ինչպես բոլոր խաղերը, այն մի օր կավատվի և ամեն ինչ կսկսվի նորից, միայն այս անգամ մեկ ուրիշը կմիացնի խաղը և կխաղա միլիադավոր տարիներ: Երբ խաղում գործող կերպարներից գլխավորը ում միջոցով խաղը հասնում է իր տրամաբանական վերջի՝ մարդը կգտնի այն ծրագրավորման լեզուն որով կարելի է աշխարհը ծրագրավորել, խաղը կրկին կավարտվի՝ նորից սկսելու միտումով: Ես, ինչպես բոլորը, ունեմ իմ խենթ պատկերացումները և թող Աստված ինձ պատժի, եթե մեղք եմ գործում այսպես մտածելով:

Մասնագիտությամբ «հետաքրքրասեր եմ» և նոր հրաշք տեսնելու մոլուցքով տարված գնացի այդ ամսագրի խմբագրություն, որ գտնեմ այն լրագրողին, ով գրել է այդ հոդվածը: Ես անգամ չէի կարող պատկերացնել, որ ամեն բան այդքան հեշտ կլինի: Երբ հասա խմբագրություն, տեղեկատու աշխատակիցը ասաց, որ հոդվածի հեղինակը գլխավոր խմբագիրն է, իսկ գլխավոր խմբագրի քարտուղարուհին թույլ տվեց ներս մտնել՝ ասելով, թե նա զբաղված չէ: Նա ցույց տվեց այն դուռը, որը բացելուն պես ես կհայտնվեիր այն մարդու դիմաց, ով գրել էր այդ խենթ լուրը: Ես մի պահ կանգ առա, մտածեցի առաջին բառերը, որ պետք էր փոխանակելի այդ մարդու հետ և բացեցի դուռը: Ի զարմանս ինձ՝ ամբողջապես կոկիկ կահավորված աշխատասենյա-

կում մարդ չկար, և քանի որ խմբագրի քարտուղարուհին ասել էր, որ նա ազատ է, և կարող եմ մտնել, ես մտա ներս՝ մտածելով, թե երևի հիմա կգա: Դուռը իմ հետևից ծածկելով՝ ես գնացի առաջ և նստեցի գրասեղանի ձախ կողում դրված աթոռին: Ես նստած անցկացրի մոտ 10 րոպե և որոշեցի դուրս գալ ու հարցնել՝ ուր է նա: Հարցիս համար հնչած պատասխանը ինձ ապշեցրեց: Քարտուղարուհին ուղղակի ասաց, որ նա երբեք էլ չի գալու: Այդ պատասխանի մեջ ես շատ բան տեսա՝ ցավ, ավիոտոսանք: Նա, հագիվ զսպելով արցունքները, կանգնեց նստած տեղից, մոտեցավ աշխատասեղանի դռանը, բացեց այն և գնաց գրասեղանի մոտ, խնդրելով, որ հետևեմ իրեն: Ես լուռ մոտեցան նրան, նա աշխատասեղանի վրայից վրեցրեց մի նոթատետր, տվեց ինձ և հեռացավ՝ իր հետևից փակելով դուռը: Այդ պահը այնքան լուռ էր և այնքան արագ եղավ, որ չհասցրի նրան հարցնեմ՝ այդ ինչ նոթատետր է: Ես կրկին մենակ էի աշխատասենյակում, հետո այս անգամ մի նոթատետր կար, որը ես չէի համարձակվում բացել: Վերջապես հավաքեցի ինձ, նստեցի արդեն հարազատ աթոռին և մահվան պես լուռ սենյակում վախվորած բացեցի այն: Ինձ արդեն ոչինչ չէր զարմացնում և չզարմացա նաև այն բանից, որ նոթատետրը դատարկ էր: Միայն առաջին էջի վրա գրված էր մի վեռնագիր՝ «Կյանք 5 թույլում» և այլևս ոչինչ: Սկսեցի արագ թերթել այն՝ ինչ-որ գրված բան գտնելու համար, որ հասկանամ՝ ինչ է կատարվում, բայց այն դատարկ էր մինչ այն պահը, երբ հասա վերջին էջին: Այստեղ ևս մեկ տող կար գրված՝ «Հեղինակ՝ Ալեքսանդր Վերդի»: Այս տողը մահու չափ վախեցրեց ինձ: Նոթատետրը այնքան ծանրացավ, որ չկարողացա պահել ձեռքումս, և այն ընկավ գետնին: Այդ պահից անցավ մի քանի վարկյան... ես սառած հայացքով նայում էի և...

Արթնացա Հռոմի հիվանդանոցներից մեկում: Անկողնուս մոտ կանգնած էր որդիս և տխուր, բայց և զարմանքից ջուր կտրած նայում էր ինձ այնպես, ասես ուրվական էր տեսել: Ես հասկացա նրա այդպես նայելու պատճառը, երբ այդ վարկյանին ինչ-որ բան ստիպեց ինձ նայել ձեռքերս և ձեռքերս ես գտա ճմրթված ու ծերացած: Ես կարծես հասկացա ինչ էր կատարվում և առանց ժամանակ կորցնելու հարցրեցի որդուս, թե ինչպես եմ հայտնվել այստեղ ու որքան ժամանակ է ինչ պառկած եմ: Նրա պատասխանը հաստատեց կասկածներս: Նա ասաց, որ երեկ երեկոյան վատ եմ զգացել, եկել եմք հիվանդանոց, այստեղ ընկել եմ կոմայի մեջ 3 թույլ առաջ, ու հիմա այս վիճակում եմ: Անճանաչելի ծերացել եմ համարյա 90 տարեկանի

տեսք ունեն: Ես ամեն վայրկյանը սկսեցի հաշվել մտքումս, և հավատացնում եմ, երբ գիտակցում ես, որ մի օր մահանալու ես, դա դեռ ինքնախաբեության միջոցով կարողանում ես ասել, թե կապրեմ, կյանքը առջևում է: Իսկ երբ գիտակցում ես, որ ունես երկու թուպե՝ նույնիսկ ավելի քիչ, այդ պահին միայն մտածում ես՝ ինչ անեն, որ աշխարհը ինձ հիշի կամ գոնե մի բան թողնեն ինձնից հետո:

Որդուս խնդրեցի, որ գնա և հնարավորինս արագ թուղթ ու գրիչ բերի. ուզում էի մի քանի տող գրեն կատարվածի մասին՝ թեկուզ մի: Մինչնա կվերադառնար, գլուխս թեքեցի պատուհանից՝ կարծես ուզում էի հրաժեշտ տալ աշխարհին: Այդ պահին ակնողմուս կողքին դրված սեղանիկին հայտնաբերեցի այն խմբագրի՝ Ալեքսանդրի նոթատետրը: Դողացող ձեռքս ուղղեցի, վերցրի այն, և բացելուն պես նորից հիշեցի, թե ինչպես եմ զարմանում մարդիկ: Նրա մեջ կար նույն վեռնագիրը՝ «Կյանք 5 թուպեում»: Բայց այս անգամ նրա տակ գրված բան կար, վախեցած շրջեցի և տեսա, որ վեջին 2 թերթերը դատարկ էին: Միայն վերջում գտա հեղինակի անունը՝ «Հեղինակ՝ Վալտեր»: Չգիտեմ՝ այն ինչպես էր հայտնվել այդ սեղանին, և երբ էի գրել այդքանը, բայց որ այն կար, դա փաստ էր և չէր կարող կեղծ լինել, քանի որ դա իմ ձեռագիրն էր: Այն պահին երբ ես ապշած թերթում էի էջերը, որդիս ներս մտավ՝ բերելով գրիչ, թուղթ: Իմ հաշվարկներով մնացել էր 30 վարկյան, որ աշխարհի խաղում դեր ունենամ և ինչ-որ բան փոխեմ: Խնդրեցի որդուս շարունակել նոթատետրի գրածը՝ միայն իմ անունից: Ուզում էի, որ այն ավարտվեր այս նախադասությամբ. «Միգուցե քո կյանքը ևս 5 թուպե է միայն...»

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Մարինե Սարգսյանը ծնվել է 1999 թ. սեպտեմբերի 22-ին Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Քերք գյուղում: 2005-2016 թթ. սովորել է տեղի Կոմիտաս Հակոբյան անվանի միջնակարգ դպրոցը՝ գերազանց առաջադիմությամբ: 2016 թվականից սովորում է Արցախի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում: 2019 թ. մասնակցել է Արցախի պետական համալսարանի կողմից կազմակերպված Մայրենի լեզվի տոնին նվիրված շարադրությունների մրցույթին և զբաղեցրել 1-ին տեղը:



2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կադարողների հանրապետական ուսանողական փեննալիի գրական մրցույթում նրա «Գիրելիքը լույս է» էսսեն զբաղեցրել է 3-րդ տեղը:

ԳԻՏԵԼԻՔԸ ԼՈՒՅՍ Է (Էսսե)

Դպրոցն ավարտելուց հետո՝ նոր կյանքի շեմին մտորում ես, թե ինչպիսի մասնագիտություն ընտրել, որպեսզի ժողովրդիդ կյանքում արժևորվի: Մեր առջև դնելով որոշակի նպատակ, ջանք ենք գործադրում այդ նպատակին հասնելու համար, որպեսզի իմաստավորվի մեր կյանքը: Մարդը իր գաղափարներով առաջ է մղում կյանքը՝ իբրև բացարձակ արժեք: Այսօր՝ մեր օրերում, կրթությունը և գիտելիքը հսկայական ներուժ են: Բարձրագույն գիտելիքներով որակյալ մասնագետ լինելն արդեն դարձել է ժամանակի պահանջ՝ օրվա հրամայականը: Ամեն մարդ որոշում է, իր մասնագիտությունը, հետո ըստ այդմ կառուցում իր հետագա կյանքը: Սակայն կարծում եմ, որ մասնագիտության

որոշում կայացնելը ինքնուրույն գիտակցված ընտրություն է: Մարդկային կեցության և մտածողության ամենախորհրդավոր հարցը, իր մասնագիտությամբ բացահայտվելն է: Յուրաքանչյուր մարդու մեջ ստեղծարար աշխատանքի թաքնված ուժ կա: Պետք է ազատություն տալ դրան, զարգացնել, որպեսզի երկիրը հարստանա, լցվի հրաշալիքներով: Իզուր չեն ասում, որ մարդկային «ամենամեծ» հարստությունը գիտելիքն է, որը լույս է տալիս ամեն մի բնագավառում: Բարձրագույն հաստատությունում սովորելով՝ պետք է գիտակցենք, որ գրագետ, բազմակողմանի զարգացած լինելը և մասնագիտություն ունենալը կյանքում հողի վրա ամուր կանգնելու գրավականն է: Համալսարանական կրթությունը կարևոր դեր ունի երիտասարդների աշխարհայացքի ձևավորման հարցում: Յանկության դեպքում հնարավոր է իրագործել անհնարինը, եթե հավատում ես գիտելիքի զորությանը: Ժամանակակից աշխարհում կրթության դերն օրըստօրե մեծանում է: Այն ապահովում է մեր հոգևոր արժեքները, մեր ազգի ֆիզիկական գոյությունը: Թևակոխելով զարգացման մի նոր դարաշրջան, օր օրի փոփոխվող համաշխարհային մարտահրավերներին միայն կարող ենք դիմակայել գիտելիքի հսկայական ներուժով և վեհ գաղափարներով: Գիտելիքը հզոր ուժ է, որը միշտ էլ օգնում է ավելի ճիշտ ապրել՝ հարստացնելով մարդու միտքն ու հոգին: Գիտելիքներով զինված, հմուտ երիտասարդները ձգտում են գիտական մտքի զարգացմանը և ապահովում ողջ հասարակության առաջընթացը: Ինձ միշտ ներշնչել է այն գաղափարը, որ լիարյուն և լիարժեք մարդը, քաղաքացին կարող է դաստիարակվել միայն ճշմարիտ ու հաստատուն կրթության ճանապարհով: Ժամանակակից կրթության այլ կարևոր բաղադրիչներ պետք է հանդիսանա համապատասխան գիտելիքներ դասավանդողները, սովորողների ընտանիքների ակտիվ մասնակցությունը կրթական գործընթացին: Կրթության կարևոր բաղադրիչներից են լեզուների ուսուցումը, որը թույլ կտա շփվել համաշխարհային մշակույթի նվաճումների հետ և ստանալ համապատասխան տեղեկատվություն: Մարդկային կյանքի մեծագույն դադտնիքը մնացել է այն, որ մարդը բոլոր ժամանակներում, ձգտել է հայտնաբերել մտքի ուժը: Միտքը առկայծված է քարի մեջ. բայց չի քարանում, ընդհակառակը, խոսում է ժամանակակցի ձայնով: Միտքը քարից ավելի համառ է. մտքերից կարելի է տաճար կառուցել, որտեղ կմաքրվի ու կվեհանա մարդու հոգին: Ինչպես բառարանի մեջ բառերը նման են վանդակված կամ քնած առյուծների: Պիտի կարողանաս արթնացնել նրանց,-

բաց անել վանդակի դուռը և տալ ազատություն: Միայն այդ սլացքի պահին կերևան հայոց առյուծ-բառերի ուժն ու չքնաղ գեղեցկությունը: Հայ ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է իր ազատության ու պետականության համար և հասել դրան միայն ու միայն մտքի ու գիտելիքի կայուն կիրառմամբ: Նախախնամությամբ է մեզ տրված կայուն և վճռորոշ գիտելիք ունենալը, վկան՝ հայոց գրերի գյուտը: Գիտելիք է նաև բարբառագիտությունը, որն ուղեկցում է տարբեր բնակավայրերի ժողովուրդներին: Հայոց բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը մեր անկոտրուկ և պաշտպանիչ բարբառի մասին մի առիթով ասել է. «Ժայռի նման է այս հին բարբառը»: Պատահական չէ, որ չհղկված լինելով ճակատագրի բերումով մեր գիտելիքի լույսը սփռված է ամբողջ աշխարհով: Ու աշխարհը մեզ ճանաչում է մեր գիտելիքի լույսով: Եվ բոլորովին պատահական չէ մեր ժողովրդի կողմից աշխարհի չորս կողմում լուսավորության կենտրոններ, կրթօջախներ կառուցելը: Իմ կյանքի կարևորագույն ցանկություններից եմ համարում, մենք՝ ուսանողներս, ավելի շատ հարգենք մեր սովորելու իրավունքը, որովհոտև ուսանողներին տրված է ավելի մեծ հնարավորություն ինքնահաստատվելու և ինքնակատարելագործվելու համար: Ուսանողը պետք է զինված լինի հմուտ գիտելիքներով: Մենք մեր նախնիներից ժառանգել ենք մեր երկրի հարուստ գանձարանը՝ նյութական և հոգևոր արժեքները: Մեր երկրի հզորության հիմքը պետք է լինի կրթված ու բանիմաց մարդը, որի ձևավորման հնարավորությունը տալիս է ժամանակակից պահանջներին համապատասխանող մայր համալսարանը: Որ տալիս է մեզ կյանքի իմաստի էությունը, և մասնագետ լինելու պարտականությունը, ինչպես նաև կյանքում ինքնակատարելագործվելու ունակությունը: Կցանկանալի մենք՝ մեր գիտական աշխարհը նորանոր գիտելիքներով զինելու ճանապարհին տոգորվենք անսպառ եռանդով, անսահման աշխատասիրությամբ և գիտակցենք, որ միայն գիտելիքով զինված թնդանոթն է ունակ կործանել կյանքի բոլոր հորձանուտներում հանդիպող յուրաքանչյուր գորղյան հանգույց:



ԷԴՈՒԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1997 թ. մարտի 17-ին Սյունիքի մարզի Կապան քաղաքում: 2003-2014 թթ. սովորել է Կապան քաղաքի N 3 միջնակարգ դպրոցում: Ստեղծագործում է դեռևս դպրոցական տարիներից: 2011-2013 թթ. մասնակցել է «Համո Սահյան- Պարույր Սևակ» և «Սայաթ-Նովա-Պարույր Սևակ» մարզային մրցույթ-փառատոններին, որտեղ արժանացել է մրցանակային առաջին տեղին: 2013 թ. մասնակցել է նաև «Սայաթ-Նովա-Պարույր Սևակ» համրապետական մրցույթ-փառատոնին, որտեղ ընդգրկվել է լավագույն տասնյակում: 2013 թ. մասնակցել է Չարենցի 115-այմակին նվիրված համրապետական մրցույթ-փառատոնին՝ զբաղեցնելով մրցանակային երկրորդ տեղը: 2014 թ. Նավասարդյան խաղերում, որպես լավագույն ասմունքող, ստացել է ոսկե մեդալ: 2014 թ. մասնակցել է Սիսիան քաղաքում կայացած առաջին երիտասարդական TEDxYouth@Sisian միջոցառմանը, որը կրում էր «Առաջընթացի անիվ» խորագիրը: 2013 և 2014 թթ. եղել է «Ծիածան» քրիստոնեական ճամբարի ջոկատավար: 2014-2020 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնում: 2020 թվականից առ այսօր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրոս է: 2014-2016 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2014 թ. մինչ օրս ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան և հաղորդավար է: 2016 թ. «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդական մրցույթ-փառատոնի գրական մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի: 2018-2019 թվականի փետրվար աշխատել է Europa+ radio-ում որպես վարող: 2019 թ. փետրվարից աշխատում է ՀՀ Ազգային ժողովում որպես պատգամավորի օգնական: 2019 թ. «Նրա տվածը նման էր լոկ սպիտակ թղթի...» և «Միայնակ նստած, ինչպես շատ հաճախ...» ստեղծագործությունները տպագրվել են Երևանի պետական համալսարանի

հիմնադրման 100-ամյակին նվիրված «Քնար համալսարանի» ժողովածուում: 2019 թ. հրատարակել է իր առաջին բանաստեղծությունների ժողովածուն՝ «Մտածել ու ճիշտ քայլ գցել»: 2019 թ. «BoomԵրանգ» արվեստի մրցույթ-փառատոնի ասմունքի մրցույթում զբաղեցրել է պատվավոր առաջին տեղը:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» խորագիրը կրող երիտասարդ սրեղծագործողների և կադարողների հանրապետական ուսանողական քինակների ասմունքի մրցույթում զբաղեցրել է երկրորդ տեղը, իսկ գրական մրցույթում արժանացել խրախուսական մրցանակի:

ԿԱՊԱՆԻՍ

Ու կրակով լցված նորից, վառված լեռան պատմությամբ՝
Ես կքայլեմ իմ քաղաքով՝ լի Նժդեհյան հավերժությամբ:
Իմ գետերի սուրբ ջրերին անիրական հայացք գցած,
Փողոցներին լույս ու ջահել, բայց դե արդեն ծերացած՝
Ես կվազեմ երկիրն ի վեր, ափում կառնեմ քաղաքը իմ,
Ու, երդվում եմ, որ չեմ սիրի ոչ մի քաղաք երկրում ճղճիմ:
Կամուրջներին իմ օջախի արծվի նման բացած թևեր,
Ինձ պարտական որդի կզգամ երկնիդ խորքում անվեհեր:
Հարավային մայր քաղաքից թե հեռանամ ու չգամ,
Թող որ երբեք մեծ աշխարհում մույնիսկ փոքր սեր ես չզգամ:
Ինձ չանիծեք, լեռներ վսեմ, Խուստո՛ւփ, ների՛ր, թե հանկարծ,
Այս գորշ կյանքում մի օր ես էլ այլ տեղ լինեմ բանտարկված:
Հիշե՛ք դուք ինձ, ու թե այնտեղ հեռո՛ւ հեռվում ինձ գտնեք,
Ամեն գնով Կապան բերեք, Խուստո՛ւփի տակ ինձ թաղեք:
Երկար չլա՛ք, ես չեմ մեռնի, փակ աչքերով մտած քուն՝
Կապրեմ արդեն, կապրեմ, եթե ձեզնով լինեմ ես լեցուն...

* * *

Գնացքը գնաց, կարծես էլ հետ չի գա,
-Բարին թող լինի,- ասին, գնացին:
Ու ես այս տաշած հին քարին նստած.
Զգացի, որ նրանք մի քիչ տխրեցին:
-Սա էլ հեռացավ, կգա երևի,-
Լավեցին ձայներ հեռու ու մոտիկ,
Թո՛ղ ճամփան պատվի լույսով արևի,
Մաղթեցին նրան բազմաթիվ մարդիկ:
Ես էլ եմ ասիա հենց այսպես ապրում.
Մաղթում եմ քարին լույսով արևի,
Ինձ ասել են, որ միշտ բարին է հաղթում,
Ու հույսով լցված սիրտը երևի...
Գնացքը գնաց, կարծես ինչ-որ մեկը
Հեռուներ գնաց սիրո հետևից,
Իսկ ես այս տաշած հին քարին նստած
Թրջվեցի հանկարծ անկոչ անձրևից...

ՎԵՐՋ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՈՏԻՆ

ՍտՎերով անգամ եթե գնանք, պիտի գտնենք մենք ճանապարհ,
Եթե նույնիսկ սառցապատեն, մենք սահելով կանցնենք աշխարհ,
Թե՛րահավատ եթե նայեն, մեր հայացքին չեն դիմանա,
ԱրՋի ձայնով եթե ոռնան, արծիվները մեր կարթնանան:
Արթուն, թե ոչ մենք ուժեղ ենք, մենք միշտ հպարտ, Աստվա՛ծ վկա,
Ու լՈւսավոր հաղթանակը առաջինը մեզ մոտ կգա:
ԳաՐճան արև, գարնան ծաղիկ, առաջինը մեզ կժպտան,
Հե՛Քիաթային իրենց ձայնով տխրակները բարև կտան:
ԱնՍղուհաց շատ շների գույգ աչքերը պիտ քռանան,
Որ Կուրացած մեր հողերից սուր ու վահան վեր բարձրանան:
ՔնՍձ, թե ոչ մենք անմահ ենք, մենք միշտ տոկուն, Աստված վկա,
Ու աՆաղարտ ամեն հոգի մեր սուրբ հողին դեռ հյուր կգա:
Իմ Հավատը ապրում է դեռ, անմահ է մա միշտ լինելու,
Եվ Ոխերիմ մեր թշնամին մեր հողին ոտք չի դնելու:
ՄաՏյաններից մեր սրբազան չեն լավելու արյան ձայներ,
Եվ Իսկապես, հավատացե՛ք,
ՄեՆք պիտ ծնենք դեռ շա՛տ քաջեր:

* * *

Տարիք, կնճիռ, մաշած տաբատ, քայլվածք՝ արդեն հնացած,
Ծերանում են վարպետները՝ կյանքի ճամփով երկար անցած:
Բարի էլ են, միամիտ են, մտքին՝ միայն լավություն,
Մինչդեռ այսօր կյանքն աշխարհի շատ է ցանում չարություն:
Վարպետների պապերն ասին, - «Կհնձես այն՝ ինչ ցանես»...
...Իսկ թե այսօր սա ենք ցանում, Աստված գիտի՝ ի՞նչ կհանես:
Տարիք, կնճիռ, մաշած տաբատ, քայլվածք՝ արդեն հնացած,
Ու ոչ նրանք, այլ նորերն են թվում կարծես կուրացած:
Խմում, հարբում, անհամանում, մեծամիտ են դառնում ասես,
Ա՛խ, երանի նրանք հարբած մի բան կարդան վարպետի պես:
Խոսքը՝ դանդաղ, շուրթերը՝ չոր, իսկ հոգին էլ՝ վաղուց հոգնած,
Բայց դեռ խորհուրդ կարող են տալ վարպետները մեր գինովցած:
Մի բան կասեն հայացքն ուղիղ, ձեռքերը՝ լուռ ու դողացող,
Ու կկանգնի այդժամ մի պահ մեր այս կյանքը չարացող:
Կմտածես ու կտխրես ասածի մեջ թե խորանաս,
Տարիք, կնճիռ, մաշած տաբատ այդժամ միայն կհասկանաս:



ՍԻՐՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

Միրուշ Օհանյանը ծնվել է 1996 թ. հուլիսի 30-ին, Երևանում: Սովորել է Ն. Վ. Գոգոլի անվան թիվ 35, այնուհետև՝ Գր. Ջոհրապի անվան թիվ 43 ավագ դպրոցում: 2014-2018 թթ. սովորել

է Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի իտալերեն լեզու և գրականություն բաժնում (բակալավր), իսկ 2020 թ. ավարտել է նույն ֆակուլտետի լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության (իտալերեն) բաժնի մագիստրատուրան: 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակում վերապատրաստման ծրագիր է անցել Բոլոնիայի համալսարանում (Իտալիա): 2019 թվականից աշխատում է վարչապետի աշխատակազմում:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի չայնը» խորագիրը կրող երիտասարդ սրեղծագործողների և կարարողների հանրապետական ուսանողական բիենալիի գրական մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի:

Դու, մեղսապարտդ, հայտնվեցիր ինձ իբրև... մարգարե,
Ես, պարզասի՛րտս, հավատալ դեռ չէի դադարել,
Ես քավեցի քո՝ երբևէ գործած բոլոր մեղքերը,
Փոխարեն դրա բոլոր վերքերս հատ-հատ քամեցիր,
Ու շուրթիս թողիր քեզ համար հյուսած բոլոր երգերս:

Ձեռքս բռնեցիր ու մեջը ավիս սեր դրիր մի բուռ,
Մի բուռ սեր տվիր ու դրա դիմաց
Դեմքիս փակեցիր ամեն պատահած,
Ամեն հանդիպած, լավ ու վատ եղած,
Ու նույնիսկ անգամ իմ առջև բացված այն վերջին դուռը:

Մի համբույր առար ու դրա տեղը
Ինձ մի ողջ կյանքի տառապանք տվիր,
Ինձ ցավը տվիր, քեզ առար դեղը.
Ասա ինձ հիմա՝ ես ինչո՞վ պահեմ
Անտեր մնացած իմ տուն ու տեղը:



ՄԵԼԻՆԵ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Մելինե Առուշանյանը ծնվել է 2000 թվականի նոյեմբերի 6-ին Սյունիքի մարզի Խնածախ գյուղում: 2005-2006 թթ. հաճախել է տեղի միջնակարգ դպրոց: 2007-2018 թթ. սովորել է Քաջարանի թիվ

1 միջնակարգ դպրոցում: 2008-2014 թվականը հաճախել է Քաջարանի արվեստի դպրոց՝ քանոնի և վոկալի բաժին: 2015-2018 թթ. մասնակցել է ասմունքի փառատոնների՝ զբաղեցնելով առաջին և երկրորդ հորիզոնականները: 2015 թ. մասնակցել է «Մեղու» հայերենը բոլորի համար մրցույթին՝ զբաղեցնելով 2-րդ հորիզոնականը: 2014-2017 թթ. պարել է Քաջարանի արվեստի դպրոցի պարի համույթում: 2015-2017 թթ. մասնակցել է «Հայոց լեզու և գրականություն» առարկայի օլիմպիադային՝ միջդպրոցական և մարզային փուլերին: Գրական առաջին քայլերն արել է 2015 թ.: 2018 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժին: Նույն թվականից անդամակցում է ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» քատրոն-ստուդիային և երգչախմբին: 2019 թ. ակտիվորեն մասնակցել է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակի միջոցառումներին, որի շրջանակներում սեպտեմբերի 26-ին խաղացել է ռեժիսոր Կարինե Դավթյանի կողմից բեմադրված Տ. Չոխաջյանի «Կարինե» օպերետում, կատարել է մաս կամավորական աշխատանքներ:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրբեղծագործողների և կալրարողների հանրապետական ուսանողական քինեմալեի ասմունքի մրցույթում զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը, իսկ գրական մրցույթում արժանացել իրախուսական մրցանակի:

* * *

Ում էր պետք հայացքդ խաբող
Կամ բառերդ ոչինչ չասող,
Ում էր պետք ժպիտդ գերող,
Որ ինձ դարձրեց հավետ սպասող:

Ես դարձա մի խենթ ու խելատ,
Դու դարձար այրող մի արեգակ,
Դու դարձար մի վառ կրակ,
Իսկ ես մնացի անլույս ճրագ:

Եվ այսպես ահա, անցնում են օրեր,
Չեմ կարող քեզ պես վայելել օրերս,
Տարար ամեն ինչ, չթողիր ոչինչ,
Իսկ ես խորտակվեցի աչքերում քո ջինջ:

* * *

Երեք տարի առաջ էր, անցավ ու գնաց
Բայց ցավն ու կսկիծը մեզ ընկեր մնաց,
Թուրքը եկավ արյուն թափեց ու գնաց
Եվ մեր սերը անպատասխան մնաց:

Մոր աչքը հավերժի ճամփին մնաց
Սիրտը ճաքեց՝ որդու կարոտը մնաց
Հոր ցավը լեզու առավ ու մռմռաց
Քրոջ վառած մոմն էլ հանգավ ու գնաց

Ամենը գնաց, անցավ անվերադարձ
Միայն մի գույգ աչք թախծոտ մնաց
Միայն մայրը սև հանդերձանք հագավ
Միայն քրոջ երգը դարձավ լուռ ...

Իսկ խեղճ հայրը նկարը գրկած
Իր տան ճրագին Աստծուն հանձնած
Սրբում էր աչքերը՝ ցավից կուրացած
Չէր զգում սիրտը՝ ցավից ճաքճաքած

Սիրած աղջիկն ի՞նչ աներ,
Էլ ո՞ր պատին գլուխ խփեր,
Էլ ո՞ւմ գրկեր, կրծքին սեղմեր,
Ում նամակին պատասխաներ...

Արյուն էր հոսում բոլոր սրտերից,
Ու թեկուզ անցնի հարյուր տարի
Հայի ցավը չի մարի,
Հայի սերը չի դադարի:

Շնորհակալ եմ Տղերք,
Ամեն լուսացրածս օրվա համար շնորհակալ եմ:

ՌԱՖԱՅԵԼ ԱՎԱԳՅԱՆ



Ռաֆայել Ավագյանը ծնվել է 1999 թ. հունվարի 3-ին, Երևան քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է 2005-2013 թթ., Ծովակալ Իսակովի անվան հ. 132 հիմնական դպրոցում: 2005-2012 թթ.

սովորել է Կոնստանտին Սարաջյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժնում: Ուսանելու տարիներին բազմիցս մասնակցել է մի շարք հանրապետական և միջպետական մրցույթների և դարձել դափնեկիր: 2013-2016 թթ. սովորել է Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի ֆինանսների բաժնում: Ուսումնառության տարիներին բացահայտել է սերը գրելու հանդեպ: 2016-2020 թթ. սովորել է Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնեսի և տնտեսագիտության քոլեջի գործարարության բաժնում, այժմ սովորում է նույն բաժնի մագիստրատուրայում: Համալսարանական և միջհամալսարանական երաժշտական միջոցառումներին մասնակցելուց զատ, հավաքագրել է «գրանկարային» (calligram) բանաստեղծությունների իր առաջին ժողովածուն, որն այժմ տպագրման փուլում է: Նպատակ ունի առաջիկա երկու տարիների ընթացքում համատեղել օրիգամիի և հայկական փակագիր կցագրերի արվեստը՝ ստեղծելով գաղտնագիր գրվածքների գրքույկ:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ջայնը» խորագիրը կրող երիտասարդ սրեղծագործողների և կարարողների հանրապետական ուսանողական բիենալիի գրական մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հաճախ անցյալի մասին մտորելիս
Մենք ցանկանում ենք աղաղակել:
Ճիշ, որ մարդու մտքից պոկվելիս
Գուցե ցանկանում է հոգին խաղաղել,
Սակայն ավիրում է, նետում բավիղ,
Որտեղից անցավ անհնար է փախչել:
Ստիպում կլանել ամեն մի շավիղ,
Որը ժամանակի խաչմերուկում է մեզ կանչել:
Որպես վաղեմի կալանավորն այս բանտի,
Հայտարարում եմ՝ աղաղակե՛ք անխնա,
Մինչ այդ ճիշը խորհրդով այս ներկայի,
Դուրս կմնա ժամանակից այս դժնի:

ՎԱՅՐԿՅԱՆՔ

Մեկ...
Այլևս այդ մեկը վերացվեց:
Մեկ...
Այժմ այդ մեկը վերածնվեց:
Մեկ...
Անհնար է հաշիվը անցնել:
Մեկ...
Անհնար է իր ետևից հասցնել:
Մեկ...
Եկավ, գնաց մի վայրկյան:
Մեկ...
Թողեց ամեն մի վայր կյանք:

ՈՒՈՒՆԻՆ

Բոլորի աչքերի դիմաց,
Սակայն ամենքից թաքուն,
Օրորի քնքշությամբ հենված
Մի ուռենի է սիրտս թակում:
Միշտ իր թախծոտ էությունը
Մի պահ ստիպում ինձ կանգնել:
Անասելի հեզությամբ
Արցունքների փունջ կապել,
Եվ վայրկյանի մեջ սառած
Արտասվում է, կարծես, անվերջ,
Քանզի իր կյանքին դահիճ դառած
Ժամանակն է թերթում նոր էջ:

ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Դատարկ է, դատարկ, ամենն է դատարկ:
Անգամ այս բաժակը, որ կիսով չափ է լցված,
Անգամ այս ակնարկը, որ կմնա չլսված,
Որ կյանքը մահակ է՝ գլխներիս կախված:
Անգամ այս քաղաքը, որում մենք կանգնած,
Որում բազմաթիվ մարդիկ մտորած,
Շարժվում ցաքուցիր՝ ամենը մոռացած...
Նոսր է մի տեսակ, դատա՛րկ է, դատա՛րկ:
Եվ թե չլիներ ակնթարթն այս ահագնացող,
Այս անկատար պահը՝ մեզանից հեռացող,
Մեր բոլոր սխալները՝ հեռվում մնացող,
Գուցե չտեսնեի աշխարհն այս լի, այսքան դատարկ...

**ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ,
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԵՎ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԱԼԵԵՐՏ ՍԱՖԱՐՅԱՆ

Ալբերտ Սաֆարյանը ծնվել է 1998 թ. Երևանում: Սովորել է Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցում: Ուսմանը զուգընթաց սովորել է Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում:



Այժմ սովորում է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիս բաժնի 3-րդ կուրսում: 2017 թվականից առ այսօր ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» բաժնում ստուդիայի սան է:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կալարողների հանրապետական ուսանողական քիենալեի գեղանկարչության մրցույթում զբաղեցրել է առաջին տեղը:



*«Տեղերի սուրբ Ասրվածածին եկեղեցի» կրավ, յուղաներկ, 25x35,
անձնական հավաքածու*



*«Աշնանային արահեղ» կրավ, յուղաներկ, 35x25,
անձնական հավաքածու*



«Մասիսը մայրամուտին» կտավ, յուղաներկ, 30x20, անձնական հավաքածու



«Նարդյուրներ» կտավ, յուղաներկ, 25x20, անձնական հավաքածու



ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Աննա Խաչատրյանը ծնվել է 2000 թ. օգոստոսի 28-ին Վանաձոր քաղաքում: 2006-2018 թթ. սովորել է Վանաձորի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան թիվ 11 սվագ (նախկինում միջնակարգ) դպրոցում:

2018 թ. սեպտեմբերին ընդունվել է Վանաձորի պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի կերպարվեստի բաժին: Կերպարվեստին զուգահեռ զբաղվում է նաև պարարվեստով: Հաճախել է թատերական ստուդիա: 2020 թվականից սովորում է ԵԹԿՊԻ Վանաձորի մասնաճյուղում:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կապարողների հանրապետական ուսանողական բիենալեի գեղանկարչության մրցույթում նրա «Խոհանոցային մայրություն» աշխատանքը զբաղեցրել է երկրորդ տեղը:



*«Խոհանոցային նախշուրմուր», յուղային պատերեղ, 50x70,
անձնական հավաքածու*



ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1990 թ. հոկտեմբերի 28-ին Լոռու մարզի Սպիտակ քաղաքում: 1999-2005 թթ. սովորել է Սպիտակի գեղարվեստի դպրոցում, 2006-2011 թթ. Մ. Թավրիզյանի անվան արվեստի պե-

տական քոլեջի գեղանկարչության բաժնում և ստացել գեղանկարչի և գեղանկարչության ուսուցչուհու որակավորում: 2016-2020 թթ. սովորել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի կերպարվեստի բաժնում: 2020 թվականից սովորում է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի գրաֆիկայի բաժնում: Հիմնականում ստեղծում է գրաֆիկական աշխատանքներ, փորձում է զգացածը արտահայտել ոչ ֆորմալ ձևաչափերի մեջ՝ երբեմն սյուրռեալիզմով: Նկարչությունից բացի՝ սիրում է նաև աշխատել տարբեր նյութերի հետ, զբաղվում է կարպետագործությամբ, գորելենագործությամբ, ասեղնագործությամբ, ապլիկացիայով ու կավագործությամբ:

Ամենակարևորն իր համար ստեղծագործելն է՝ լուռ, առանց շատախոսելու: Սովորելու տարիներին զուգահեռ աշխատել և կամավոր է եղել տարբեր հասարակական կազմակերպություններում: Մասնակցել է մի շարք մասնագիտական դասընթացների: Աշխատել է նաև ներառական խնդիրներ ունեցող երեխաների, հաշմանդամություն և հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց հետ որպես նկարչության ուսուցչուհի, արտթերապիստ և Art-խմբակների ղեկավար: Հետաքրքրված է նաև երաժշտությամբ, մասնավորապես՝ օպերային արվեստով և խմբային երգեցողությամբ (երգել է ՎՊՀ-ի երաժշտական բաժնի խոռի խմբում) մնջախաղով, բալետով, գեղասահքով, ֆոտոնկարչությամբ և այլն: Մասնակցել է տարբեր միջմարզային և հանրապետական ցուցահանդեսների, ունեցել է անհատական ցուցահանդեսներ:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կատարողների հանրապետական ուսանողական քիենալիի գեղանկարչության մրցույթում նրա Աննայի «Հոգեվիճակ» աշխատանքը զբաղեցրել է երկրորդ տեղը:



«Հոգեվիճակ» գրաֆիկա, 30x40, անձնական հավաքածու



ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գագիկ Ավետիսյանը ծնվել է 1993 թ. սեպտեմբերի 3-ին Երևանում: Լինելով դրամատուրգ և մեծ հայրենասեր Հարություն Երևանցու թոռը՝ դեռ մանուկուց աննկարագրելի սեր և հոգատարություն է տածել մայր հայրենիքի նկատմամբ:

Դեռևս նախադպրոցական տարիքից սիրել է նկարել: Իր պատկերագրական ունակությունները հմտացրել է 2006-2010 թթ.՝ հաճախելով Սիմաս Ավետիսյանի կերպարվեստի դպրոց: 2010-2013 թթ., ուսանելով Երևանի պետական հումանիտար քոլեջի զարդարային կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ բաժնում, դիզայնի ոլորտում ստացել է նեղ մասնագիտական կրթություն:

Ստեղծագործական բուռն վերելքին զուգորդել են 2013 թ. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթություն ֆակուլտետի կերպարվեստի բաժնում ուսանած տարիները՝ նախ որպես բակալավր, ապա մագիստրոս, իսկ ներկայումս արդեն իբրև հայցորդ: Այս ընթացքում ունեցել է երկու անհատական ցուցահանդես, մասնակցել մի քանի տեղական և միջազգային նշանակության սիմպոզիումների, հռչակվել է ՀՊՄՀ «Ամենախնդրեկտուալ ուսանող» և Գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Լավագույն ընթերցող»: Կազմել և հրատարակել է մի քանի գիտական աշխատություններ, ներառյալ՝ արցախյան ազատամարտին նվիրված «Միր Բաշիր. պատերազմ և զինադադար» գիրքը, որի շնորհանդեսին պատվել էր նաև լեգենդար Կոմանդորսը՝ Արկադի Տեր-Թադևոսյանը: Հայրենիքի հանդեպ ուրույն սերն արտացոլվել է Գ. Ավետիսյանի պատմական ժանրի ստեղծագործություններում («Երևանի պատմամշակութային կոթողները», «Ազատամարտիկներն աղբյուրի մոտ», «Հերոսապատում» կտավները): Ակտիվ ստեղծագործական պրոցեսին զուգընթաց Գ. Ավետիսյանը զբաղվել է նաև մանկավարժությամբ՝ իր հայրենասիրական նկրտումները փոխանցելով մատաղ սերնդին, որոնցից ոմանք այսօր անձնավիրաբար

պաշտպանում են հայրենի սահմաններն օտար զավթիչներից:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կարարողների հանրապետական ուսանողական քիենալեի գեղանկարչության մրցույթում նրա «Հերոսապարում» աշխատանքը զբաղեցրել է երրորդ տեղը:



«Հերոսապարում» սրվարարութ, յուղաներկ, 100x70,
ՀՊՄՀ գիւրական գրադարան



ԱՐԳԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արգինա Խաչատրյանը ծնվել է 1999 թ. հոկտեմբերի 12-ին Վանաձոր քաղաքում: 2005-2013 թթ. հաճախել է Վանաձորի Ա. Ս. Պուշկինի անվան թիվ 4 միջն. դպրոցը: 2012-2016 թթ. հաճախել է Ստ.

Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցը: 2013-2016 թթ. հաճախել է Վանաձորի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցը: 2016-2020 թթ. սովորել է Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի կերպարվեստի բաժնում: 2015 թ. Լոռու մարզում «Պատմամշակութային վայրերը երեխաների պատկերացմամբ» խորագրով գեղանկարչական աշխատանքների մրցույթում զբաղեցրել է 2-րդ տեղը: Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, մասնավորապես՝ 2013-2015 թթ. Ստ. Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցում կազմակերպված «Հայոց ազգային բանակը 21 տարեկան է», «Իմ անուշիկ մայրիկին», «Իմ քնքուշ էակ» ցուցահանդես-մրցույթներին, 2015 թ. Վանաձոր քաղաքի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված ցուցահանդեսին, 2017 թ. Վանաձոր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի մայր եկեղեցում Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին նվիրված ցուցահանդեսին, 2018 թ. ՎՊՀ-ում ֆակուլտետի օրվան և նկարիչների օրվան նվիրված ցուցահանդեսներին, 2018 թ. Վանաձոր քաղաքի կերպարվեստի թանգարանում «Հավերժի գրավականը» խորագրով ցուցահանդեսին, 2019 թ. Լոռու մարզպետարանում «Իմ Լոռի» խորագիրը կրող երիտասարդ նկարիչ-ստեղծագործողների գեղանկարչական աշխատանքների և ՎՊՀ հիմնադրման 50-ամյակին ու Գուգարաց թեմի առաջնորդարանի բակում Սուրբ Սարգսի տոնին նվիրված ցուցահանդեսներին: Կամավորական գործունեություն է ծավալում «Օրրան» բարեգործական կազմակերպությունում, որտեղ զարգացրել է և ամրապնդել թե՛ իր մասնագիտական գիտելիքները, թե՛ երեխաներին հասանելի դարձրել

նկարչական տեխնիկան, դրա տարրական հիմքերը:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կարարողների հանրապետական ուսանողական բիենալիի գեղանկարչության մրցույթում նրա «Զարթոնք» աշխատանքը զբաղեցրել է երրորդ տեղը:



«Զարթոնք» կտավ, յուղաներկ, 50x60, անձնական հավաքածու



ՀԵՐԻՔՆԱԶ ԽԱԶԻԿՅԱՆ

Ծնվել է 1995 թ. օգոստոսի 5-ին Երվանդաշատ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև 2013-2017 թթ. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի կի-

րառական արվեստի բաժնում: 2018 թվականից նույն ֆակուլտետի Կերպարվեստի բաժնի մագիստրանտ է: 2017 թվականից «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» ՀԿ-ի անդամ է, իսկ 2018 թ. Հայ տիկնիկագործների միության անդամ: 2015 թվականից աշխատում է որպես դիզայներ, ռեստավրատոր, իսկ 2018 թվականից Տիկնիկների պատկերասրահում նաև որպես տիկնիկագործ, մանկավարժ-ուսուցչուհի, COAF-Հայաստանի մանուկների հիմնադրամում որպես մանկավարժ նկարիչ: Ստեղծագործական կյանքի ընթացքում մասնակցել է մի շարք ցուցահանդեսների և մրցույթների՝ գրանցելով հաղթանակներ: Դրանց թվում են 2014 թ. «Սիրո ուժն է անհաղթ», 2015 թ. ուսանողական գորելենների ցուցահանդեսները, «Տարվա կենսաբազմազանությունը» ֆոտոլուսանկարչական ցուցահանդես-մրցույթը, 2016 թ. Ս. Սարգսին նվիրված ցուցահանդեսը, այնուհետև ՀԱՅԱՐՏ-ում կազմակերպված գարնանային ցուցահանդեսը, 2018 թ. ցուցահանդեսը Հայաստանի ազգային պատկերասրահում: Մասնակցել է «Բազե 2016» համահայկական հավաքին և հաղթել «Բազե նկարիչ» անվանակարգում: 2018 թ. մասնակցել է «Միջազգային պլեներ Հայաստան 2018» միջոցառմանը: Ունեցել է երկու անհատական ցուցահանդես՝ 2016 թ. ՀՊՄՀ-ում «Խաղաղության շունչը» խորագրով՝ նվիրված Ապրիլյան պատերազմի հերոսներին, և 2018 թ. հուլիսին Նարեկացի արվեստի միությունում՝ «Հայկական պար» խորագրով: Հայաստանում վերականգնել և շարունակում է զարգացնել կիրառական մահացած արվեստներից մեկը՝ Դոմարվեստը:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիրասարդ սրեղծագործողների և կատարողների հանրապետական ուսանողական քիենալեի կիրառական արվեստի մրցույթում նա արժանացել է «Հարուկ մրցանակի»:



«Կոմիտասաշունչ», անձնական հավաքածու



«Բմ քամանչա»,
անձնական հավաքածու



«Մեր նախնյաց հեղքերը»,
անձնական հավաքածու



«Հեղաձկուն»,
ՆԱՄ

ՄԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1998 թ. մարտի 10-ին Արարատի մարզի Լուսառատ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև ընդունվել ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի՝ Լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության բաժին: Այժմ սովորում է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի մաթեմատիկական ռեսուրսներ բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Կամավորության սկզբունքով աշխատանքներ է իրականացնում ՀԿԽԸ-ում: ԵՊՀ մշակույթի կենտրոնի «ՆԻԿԵ» ջոկատի անդամ է, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամում «Միջմշակութային ակումբ»-ի ակումբավար, «Save the Children» կազմակերպությունում երիտասարդական խորհրդատվական քիմի անդամ: Մասնակցում է զանազան բնույթի ծրագրերի իրականացմանը, որոնք ուղղված են խոցելի խմբերի մարդկանց կարիքների բարելավմանը: Չորս տարի հաճախել է հայկական ժողովրդական պարերի: Սիրում է լուսանկարել, քանի որ այն հնարավորություն է տալիս ոչ միայն տեսնել գեղեցիկը տարբեր կողմերից, այլ նաև որսալ պահը և այն հավերժացնել՝ բացահայտելով մի շարք առեղծվածային պատկերներ և դրանց խորիմաստ բովանդակությունը: 2018 թ., որպես խրախուսական մրցանակի արժանացած մասնակից, տպագրվել է «Անկախության սերնդի ձայնը» գեղանկարչական և լուսանկարչական ստեղծագործությունների ժողովածուում:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ սրեղծագործողների և կալուարողների հանրապետական ուսանողական քիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է 1-ին տեղը:





«Լուսավորը»



«Այն կողմում»



«Սուրբ Ամենափրկիչ»



«Արաջուր
մի հեռավոր
մոլորակի»



ԱՆՆԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Ծնվել է 1999 թ. մայիսի 24-ին Մոսկվայում, որտեղ և ավարտել է երաժշտական և հանրակրթական դպրոցները, ինչպես նաև լուսանկարչության ակադեմիայի բազային կուրսը: Ֆոտոնկարչական արվեստը դարձել է իր հոբբին դեռ վաղ տարիքում: Ուսումը շարունակել է Երևանում: 2017 թ. ընդունվել է Հայ-ռուսական համալսարանի կինոյի և հեռուստատեսության ռեժիսուրայի ֆակուլտետը: Վարում է ակտիվ ուսանողական կյանք՝ մասնակցում է տարբեր մրցույթների, փառատոնների: Համալսարանում կազմակերպում է նաև տարբեր միջոցառումներ: 2018 թ. Ուսանողական գարնան շրջանակներում «ՀՌՀ ֆոտո» անվանակարգում զբաղեցրել է առաջին հորիզոնականը: 2019 թ. «Ունիվերսիադա» փառատոնին «Սոցիալական տեսահոլովակ» անվանակարգում և «Բումբերանգ» («Լուսանկար» անվանակարգ) ճանաչվել է հաղթող: ՌԴ գլխավոր դատախազության կողմից կազմակերպված «Միասին ընդդեմ կոռուպցիայի» միջազգային մրցույթում զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը:

2019 թ. ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի շայնը» երիտասարդ սրեղծագործողների և կալարողների հանրապետական ուսանողական քիենալեի լուսանկարչության մրցույթում զբաղեցրել է 2-րդ տեղը:



«Արրացողում»



«Չափած խոսքեր»



«Աննեի ժպիտը»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողջույնի խոսքեր	3
ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	9
ԱՆԱՀԻՏ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ	11
ԱՆՈՒՇ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	20
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	23
ԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ.....	31
ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ	34
ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ	39
ԷԴՈՒԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	42
ՍԻՐՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ	46
ՄԵԼԻՆԵ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ	48
ՌԱՖԱՅԵԼ ԱՎԱԳՅԱՆ	51
 ԳԵՂԱՆԿԱՐԶԱԿԱՆ, ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	55
<i>Գեղանկարչություն</i>	
ԱԼԲԵՐՏ ՍԱՖԱՐՅԱՆ	57
ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ	60
ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ	62
ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ	64
ԱՐԳԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ	66
 <i>Կիրառական արվեստ</i>	
ՀԵՐԻԶՆԱԶ ԽԱՉԻԿՅԱՆ	68
 <i>Լուսանկարչություն</i>	
ՄԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ	71
ԱՆՆԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ	74

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՉԱՅՆԸ

*Գրական, գեղանկարչական,
լուսանկարչական և կիրառական արվեստի
ստեղծագործություններ*

Համակարգչային շարվածքը՝ Ա. Պռազյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

*Շապիկին օգտագործված է հարված Ալբերտ Սաֆարյանի
«Աշնանային արահներ» կրավից:*

Տպագրված է «Անտարես» հրատարակչատանը:
Ք. Երևան, Մաշտոցի պող. 50^ա/1

Ստորագրված է տպագրության՝ 19.04.2021:
Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 4.875:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ԿՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021
publishing.ysu.am